Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

14008

891.99
U-79

41
CC
2003

N 66

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

# ՑՈՒՂԱԲԵՐ

# ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

W 107

891.99
Մ-79

# ԱՆՈՒՇԱՒԱՆ

Ի ԳԵՐԵՎԱՐՍ

## ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

ՅԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՐԲԱՌ

Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ·

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
ՄԵՐՈՒԲԵԱՆ-ԷՆՖԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

ՄՈՍԿՎԱ,
Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ։
1860

3134

На основаніи разрѣшенія статскаго совѣтника Бероева, печатать позволяется. Санктпетербургъ, 2 Ноября 1859 года.

Ценсоръ *В. Бекетовъ.*

[illegible]

ԳԵՐԱՄԵԾԱՐ ՔՐԻՍՏՈՍԱԶՕՐ ԻՇԽԱՆԻ

# ԱԶԳԱՍԷՐ ԱՂԱՅ ԳՐԻԳՈՐ ՄԱՂԵՆՑՈՎԻ

ԱԶՆՈՒԱԿԱՆ ՍԱՏԱՐԶԻ ԳՐՈՑՍ

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՍԻՐՈՑ ՆՈՒԷՐ.

Ձեր ազգասիրական եւ աստուածահաճոյ գործքերը մինչեւ հիմա յօգուտ ազգայնոց Վաղարշապատայ՝ ոչ սակաւ ձեր անունը եւ ձեր առաքինական ընթացքը քաղցր հայրենասիրութեան ասպարիզին մէջ պանծացուցին ի լսելիս Ազգայնոց:

Իսկ հիմա Անուշաւանի տպագրութեան սատարելովդ յօգուտ ընդհանուր ազգիս, ձեր անուան փառքը ու ձեր գրաւոր երկոց վրա ունեցած խնամքը՝ բոլոր Հայոց լսելիքը պիտի հնչեն. եւ դուք թէեւ ազգային գրաւոր աշխատութիւնները տպագրութեան մամուլէն ծնող Ազգասիրաց կարգին մէջ այսօր վերջինն էք, բայց Անուշաւանայ անցքը Հայոց պատմութեանը մէջ գրեթէ առաջինը լինելով, դուք եւս ձեր նմաններու կարգումը ըստ այսմ առաջինն էք:

Թէ որ Յունաց կուսապաշտութեան աշխարհքի բանաստեղծութիւնը իր միակ Մեկենասի անուամբը կ'պարծի, ոչ փոքր պարծանք է եւ իմ տառապակիրս Անուշաւանս ձեզ նման քրիստոնեայ ու հայրենասէր Մեկենաս ունենալը. որով հայկազանց ժամանակի հետաքրքրական եւ անծանօթ մեծագործութիւնները նրանց տոհմին ու սերնդոցը ծանօթ կանէք այսօր սորա տպագրութեամբն ի լոյս:

Թողէք ուրեմն, քրիստոսազօր Իշխան, որ մատուցանեմ ձեզ իմ սիրոյ գրաւոր աշխատութիւնը ի խրախոյս կրկին ձեռնտուութեանդ Վաղարշապատ մայրաքաղաքի պատմութեան տպուելուն որի համար ինձ միշտ քաջալերած էք, մնալով ձեզ եւ ձեր աստուածախնամ գերդաստանին միշտ

Աղօթարար առ Տէր
Աբէլ եպիսկոպոս

Մխիթարեանց:

ի 24 մայիսի 1859.
Ս. Էջմիածին:

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԽԻԴ. ԱԲԵՐ . .
ՍԵՐՈԲԵԱՆ – ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

—

*Որքան որ Հայ ազգի գրականութեան հոգին կ՚զարթնի, այնքան եւ զգալիտաց բերնիցը խրատացի մեղադրութիւններ կը լսուին նախնեաց քանի՛ քանի՛ երեւելիներու միամտութեամբ արած գործքերի վրա, զորոնք անելով կարծել են թէ ազգը քրիստոնէութեան մէջ կ՚բռնեն, բայց ազգային նկատմամբ ազգին գրականութեանը մեծ հարուած տուած են, վասն զի ազգային պատմութիւնը այնպէս հիւսուած է այն հիմունքների վրա, որ կարծես թէ առանց նրանց սկզբնաւորութիւն չունի, իբրեւ մէկ աղբիւր, որ տեղէց որ պատմութեան սկիզբը յառաջացած, ծայրը մեզ կ՚հասնի։*

*Ո՞հ, ո՜րպիսի հարուած է ազգային գրականութեան՝ Հայոց ազգի մեհենական պատմութեան կորուստը, և ո՜րպիսի լոյս չէր տալ ազգային պատմութեան, թէ որ հիմա լինէր. ո՜վ արուց այս կորուստը, մեր հաւատոյ երկրորդ Հայրը սուրբ Լուսաւորիչն Գրիգոր, պէ՞տք էր արդեօք հաւատքը պահելուն՝ ազգի սկզբնաւորութիւնը կորցնել. ի՞նչ յարաբերութիւն ունէր արդեօք ազգի կռապաշտութեան դարուց*

Մեհենական պատմութիւնը քրիստոնէական կրօնքի Հայոց սրտի և հոգւոյ վրա թագաւորելուն հետ· թէ որ ուղիղ դատենք, շատ տկար պատճառ է այս մասին պատմաբաններու տուածը, իբր թէ ազգը քրիստոնէութեան մէջ Մեհենական պատմութիւնը կորզալով, նորէն կռապաշտութեան կը դառնայէն· Մեհենական պատմութեանց ազգին մէջ մշտնջենաւորաբար մնալը աւելի օգուտ չէ՞ր բերիլ մեր ազգին· այն պատմութիւնը քրիստոնեայ ազգ կորզալով, առասպելեալ չաստուածոց ստութիւնը ճշմարտին Աստուծոյ բաղդատելով, քրիստոնէական կրօնքին վրա աւելի չէ՞ր հաստատուիլ սրտիւ ու հոգւով, քան թէ թուլնալ· այս յայտնի շահը անկէն եւքը, Հայոց ազգի նախնական պատմութեանց բուն հաւատքն էլ կը գտնէնային այսօր, որ շատ տեղ անգիտելի է մեզ, շատ գործերի սկիզբն էլ ազգային առասպելներից առնուած։

Ո՞ւր է հայկեան Արամայ քաջութեան գործոց պատմութիւնը, որ մարտիւք նահատակութեան կ՚պատմուի, ո՞ւր նրա վարսակալ մարգարտէ գնելուն անցքը· որի հրամանը, կամ թէ ինչպէս Խորենացին կ՚ասէ, համարձակութիւնը Նինոսէն կառնու ու նրա երկրորդը կը կոչուի· ուստի՞ գիտէր Խորենացին, որ առանց ասելու կ՚խոստովանի այս պատմութիւնը վերջ անելու՝ յառաջինկայ գրելքը արգելք կը լինի։

Անշուշտ իր ժամանակի Մեհենական պատմութեան կորուստը դեռ նոր էր, և այժմեան անհետ եղած անցքերը բերնէ բերան տակաւին իրանց կ՚հասնէր, շատ առասպելներ էլ իր ականջովը լսել էր Հայոց երգիչների բերնից, ինչպէս ներքևը կ՚յիշենք։

Ո՞ւր է Զօրավարաց քաջին քաջագործ պատմութիւնը որ Հայաստանը կ'զարմացնէ, բայց ո՛չ ինչ չթողուլ իր գործունագործութեանը յիշատակ, միայն թէ Տրոյական պատերազմին մէջ իր մահը կ'յիշատակուի:

Ո՞ւր է Վահագնին մեծի գործոց պատմութիւնը, որ այնքան հրաշալիք կ'բերի աշխարհքին, մինչև մեզնից Վիրք էլ առնելով, կ'աստուածացուցանեն և անդրի կ'հանեն ի չափ հասակի նորա ու զոհիւք կ'պաշտեն, ի՞նչ կ'լինի սրա պատճառը, Խորենացին կասէ, վիշապների հետ կը կռուէր, կասէին, ու կը յաղթէր:

Սրա համար չէ՞ր երգուիլ Հայոց մէջ այն առասպելը, զոր Մովսէս Խորենացին իր ականջովը լսել էր որ բամբռով կ'երգէին իր ժամանակը «Երկնէր երկին, երկնէր և ծիրանի ծով» եւայլն:

Այն ո՞ր քաջն է Հայոց, որ Ասորեստան կ'սասանեցնի, և նրանց Բարշամ անուն նախնին, որ աստուածացուցել էին՝ կ'բանտարկէ, և ձմեռ ժամանակ նրա յարդը կը գողանայ ու երկինքը կը հանի. և յարդգողի ճամբայ կ'մնայ անունը, կամ ծիր կաթին:

Միայն Վահագն է Հայոց, որի քաջութիւնները առասպելների մէջ անմահացած է, միայն նրանց յիշատակարանները չի լինելով, ժամանակը կ'ոլէ մարդոց մահկանացու մտքից այնպէս քաջը որ իր ծննդեան առասպելապատում հրաշալիքն էլ մարդի զարմանք կ'բերի, իբրև մէկ փշրանք առասպելաց միայն մնացած իր քաջութիւնների հետ.—մէկ օր երբ Վահագն իր մանկութեան խանձարուրին մէջ բոլորած քնած էր, մայրը մօտը չէլած ժամանակը, մէկ վիշապ ռձ

կ՚գայ կ՚մնի Վահագնի օրօրոցի մէջ. ձուերը այն տեղ կ՚թափի կ՚երթայ, մայրը կգայ, մանուկը օրօրոցէն առնելու ժամանակը, յանկարծ ձուերը կ՚թափին, մայրը կ՚կանչէ «ձուերը զեղուն, ձուերը զեղուն.» և այս ձայնիցը մնաց Հայոց մէջ՝ ձուներով եփելուն անունը՝ ձուազեղ ասել:

Ուշիմ ընթերցողէն յառաջը կ՚գայ այսպէս անթիւ ու անհամար առասպելաց կտորներ ազգային պատմութեան մէջ՝ որոնք որ ծերունի պատմաբանը իբրև կենդանի վկաներ, մարդոց բերնիցը առնելով, Հայկազանց և Արշակունեաց Հայ—հսկաների գործոցը մէջ բացափայլ ակունքի նման տեղտեղ շարել ու անցել է:

Տակաւին նոյն մեհենական պատմութեանց հատուած-ներն են, որ նշխար նշխար եղած հայ ազգին մէջ կ՚խօսուին առաւելապէս Հայաստան, ուր որ իրագործութեան տեղն է և հայկազն դիւցազունների հայրենիք:—Սրանք այն առեղ-ծուածներն են, որոնք մասալ կամ հեքեաթ անունով Հայոց պառաւների և ծերունեաց յիշողութեան մէջ կենդանի մնա-ցել են. և սրանք բերնէ բերան իրանց որդւոց ու թոռներին իբրև հայրենի աւանդութիւն կ՚աւանդէին կ՚երթան, այնքան յաճախ կ՚խօսուին սրանք,,և այնքան հին կերևայ սրանց ծայրը, որ մինչև Տաճկաց և Պարսից մէջ էլ փոխանցել են, որոնք ի սկզբանէ Հայաստանի դրացիքն են:

Այս առասպելների հին լինելու մէկ ապացոյցն էլ այն է, որ Յունաց կռապաշտութեան ժամանակից մինչև հիմա սրանց հետքը կ՚տեսնուի, և այն ժամանակին մէկ առասպել որ յու-նաց մէջ հասարակեալ զրոյց էր, նոյնը Հայաստանի մէջ մինչև հիմայ էլ ազգային լեզուով առեղծուածոց կարգը կ՚պատմուի:

Հեսպերեան դարաստանը Յունաց կռապաշտութեան երևելի առասպելների մէկն է ու նոյնը այսօր Հայոց մէջ զանազան Թագաւորների վրա կ'պատմուի սակայն ինչ տարբերութեամբ. ո՞ գիտէ թէ Հայերից չէ փոխանցել Յունաց մէջ. Խորենացւոյ ժամանակը այս առասպելը աւելի հայկական էր, դրա համար ինքն էլ Հեսպերեան դարաստանը՝ հայկական ձայնով կոչել է «Դրեկորնական պարտէզ:»

Զախաւոր խօսելու համար այսպէս ասեմ, որ ես իմ չափահասութեան օրից մինչև հիմա, որ Անուշաւանը գրելու օրն է, երկու հարիւրից աւելի առեղծուած լսել եմ. սրանց շատերը նախնի Հայկազանց գործքերին կ'յարմարին, և շատերն էլ Խորենացու երկու բառով նշանակած առասպելների Թելը կը հիւսեն:

Այս պատճառաւ շատերի հետ կաւաղենք մեր ազգի մեհենական պատմութեան կորուստը, այս կորստեան վրա պիտի ցաւեն մեր յետագայքն էլ, որոնք որդի ի հօրէ ազգային առասպելները լսելով, Խորենացու յիշածներուն հետ յարմարութիւնը կ'տեսնեն:

Եղան անձինք մեզնից յառաջ, որոնք գուցէ առանց այսպիսի ցաւակրութեան կամ մեհենական պատմութեան կորուստը զգալու, հնութեան առասպելներից կենդանացուցին մէկ մէկ յիշատակարան իբրև իրանց ոգւոյն զգացման պատկեր. բայց ազգային առասպելաց համեմատութեամբ՝ շատ սակաւ և համարեա թէ ոչ ինչ:

Թէ որ դառնանք վերստին, Խորենացւոյ ժամանակի առասպելաց շատութեանը համար ապացոյց ուզենք տալու,

նոյն ծերունւոյ հոգւոյն զգացման գրիչը դարձեալ միայն վրայ բուսական է մեզ. վասն զի՝ ինքը այսպէս կսէ իր ժամանակի ազգային առասպելաց համար, Շամիրամայ և գեղեցիկն Արայի ու նրա որդւոց ու Թոռանց պատմութեանը մէջ.

«Իսկ առ այսոքիւք և աշխարհիս մերոյ առասպելք ըզ-«բազմահմուտ Աստրին (Մար—Աբաս կատինայ) արդարա-«ցուցանեն. աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ և զհետևակ «փախուստն և զպապաքումն և զիղձս ջրոյն և զարբումն, այլ «և ի մօտ հասանել սուսերաւորաց, և զկուռութմն ի ծով, «և բան ի նմանէ ուլունք Շամիրամայ ի ծով.— Այլ թէ անարժէս առասպել, և Շամիրամ քար առաջին քան ըզ-Նիոբէ» (ա. գ. գլ. ժը):

Խորենացու պատմութիւնը կարդացողը կ'տեսնէ անշուշտ, որ այս հատուածէն մի միայն մինչև Շամիրամայ հայաստան փախչիլը կ'գրէ, և անդ սպանուիլը իր Նինուաս որդոյն ձեռքով. Մնացածը բոլոր մեր աշխարհքի առասպելն է. որ ընդ քօղով կ'թողու. մենք կ'յուսանք որ մեր աշխարհի այս առասպելը Անուշաւանի քաղած անցքերովը պիտի բացատրենք, և այն ժամանակը պիտի տեսնենք որ ազգային առեղծուածները Շամիրամայ վրա, քանի մի հարիւր դարերով յառաջ խօսուած առասպելները այսօր պիտի ճշմարտին և հաստատիքը յայտնեն աշխարհքի:

Մենք վերջինն ենք այսօր այսպիսի ազգային առասպելների վրա հնախօսողը, մեզնից ետքն էլ թէ որ մէկը այս հնախօսութեան հոգւովը վառուի, ու ազգային առասպելաց խնչերանքէն ժողվելով, միւս ես առասպել պատմութեան կարգը անցնէ, այսպէսով նա էլ ազգային պարտք կ'թողու

իր քնառագայից, ինչպէս որ այսօր մեզ պարտք թողել են մեր առաջինքը՝ ոմն ի Վարդգէսն և ի Վարսենիկ իւր, և ոմն ի Պարոյր իւր, զոր ժամանակաւ գրելու խոստացած է։ Բայց մենք մեր աշխարհքի լեզուով Անուշաւանը կ'տանք մեր ազգին։

Հիմա կ'մնայ որ մեր գրելիք գրքին հանգամանքը նշանակենք, որ պիտի նկարագրէ Անուշաւանայ քաշած դէպքը ի գերեվարս՝ իբրև նախագիտելիք բոլոր գործոյս։

Ազգային նկատմամբ մեր նախնի հայկազանց վրա Խորենացու ասածէն արտաքոյ ո՞վ ինչ որ կ'ասէ՝ աւելորդ է, և չ'կայ տակաւին ազգային կամ օտար պատմաբան, որ Խորենացիէն աւելի բան ասէ, կամ թէ ծերունի պատմաբանը իր թարգմանութեան ժամանակ աչքէ անցրած չլինի։—Ըստ մեր ասածնել ինչպէս գրեցինք՝ ազգային առասպել է Շամիրամայ, Արայի, Կարդոսի և Անուշաւանայ գործոյը պարզաբանութիւն, և Խորենացու սրանց վրա քիշած առասպելներին լուսատու, այնպիսի առասպել, որով Խորենացին Շամիրամայ բոլոր գործքը զանգել է։

Կ'պատմէ Խորենացին, որ երբ Շամիրամ Արայն գեղեցիկ պատերազմին մէջ յանձանօթս սպանել տուվաւ, նրա Կարդոս որդին տասներկու տարեկան էր․ որու ի սէր Արայի յանձնեց աշխարհքին վերակացութիւնը։ Իսկ երբ որ Կարդոսն էլ Շամիրամայ հետ պատերազմին մէջ կ'մեռնի, նա էլ արու զաւակ կ'թողու իրան՝ Անուշաւան որ սօսանուէր կը կոչուէր․ Նինուաս սրա տղան գերի կ'տանի Բաբելոն, ուր երկար ժամանակ գեգերելէն ետքը, բարեկամաց ձեռքով իր աշխարհքին հարկահանութիւնը կ'առնու կ'դառնայ։

Մեր գրած նկարագրութիւնն էլ այս նիւթին ամբողջութիւնն է, ազգային առասպելաց կարգն անցած, փոքր ինչ տարբերելով պատմութեան կարգէն բանաստեղծից ոճով։

## Ա.

### Արայի ազգաբանութիւնը. — իր տոհմին պատմութիւնը մինչև իր ծնունդը։

Եթէ մեր ազգի Հայկ նահապետին ազգատոհմը երկրորդ աշխարհի նահապետէն կ'իջանէ, կ'վկայէ ազգային պատմութիւն էլ, որ Հայկայ տունը յաբեթեան կը կոչէ ազգաբանութեան մէջ որդի ի հօրէ առնելով. այս ճշմարտութիւնը այսպէս կը գտնենք պատմութեան մէջ «Հայկ որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի։»

Իսկ թէ՝ և այս, «կասէ ծերունի պատմիչը, ազգ նորա և ծնունդք» ինչպէս պիտի իմանանք, նոյնը մեզ պատմաբանական կարգաւ ցոյց կ'տայ. Հայկ զԱրմենակ ծնաւ ի Բաբելոն, և Արմենակ իր Արամայիս որդւոյն ձգեց երկրի իշխանութիւնը, Արամայիս Ամասիան կ'թողու իր որդի, և Ամասիա ծնաւ զԳեղամ, Գեղամ զՀարմայ, և Հարմայ զԱրամ, իսկ Արամ զԱրայն գեղեցիկ։

Այս Արային տոհմը կ' գտնենք հայկազանց ազգաբանութեան գաւազանագրին մէջ՝ ութերորդ սերունդ ի Հայկայ, որ յԱրամայ ծնաւ հայրենի նահապետութեան աթոռոյ ժառանգ, բայց իր աշխարհասասան հօրը քաջութեան գործքերէն յառաջ թէ ետքը, նորէն պատմութեան աղբիւրը դիմենք։

Անդ կ'գտնենք որ Արամայ այս քաջութեան գործքերը պատմելէն ետքը՝ այսպէս կ'դնէ գեղեցիկն Արայի ծնունդը ասելով, «բայց Արամ յետ ամի կենաց իւրոց ծնաւ զԱրայն:»

Բայց այս տեղս չե՞նք կարող արդեօք սուրբ գրոց կարգը խնդրել արտաքին պատմութեանց մէջ էլ, վասն զի անդ կ'տեսնենք որ այն ժամանակը յիշատակութիւն կ'լինի որդւոց ծննդեան, երբ որ նահապետական ցեղէն գլուխ պիտի անցնի որդին հօրը մահուան միջոցին, այս տեղ էլ այս համեմատութեամբ կ'գտնենք երբ որ նահապետական կառավարութեան Աթոռը պիտի ելնէր Արամ, երբ որ հօրը մահը պիտի յիշէ պատմութիւնը, որդւոյ ծնունդը յիշելու կ'յառաջէ:

Ապա թէ ոչ. բնական կարգաւ կ'հետեւցունենք որ ինչ ժամանակ Արամ կին առաւ ինքեան, էն ժամանակէն իրա զաւակաց ծնունդն էլ սկսաւ, կարենք հաւանականաբար ասել որ, գուցէ Արամ իր կենդանութեանը անգամ երբոր յաղթութեան կռիւն էր անփորձ եւ իւր սիրտը տակաւին պատերազմի չունէր գաղափար՝ հայրացաւ որդւոց: Այս ստուգութիւնը ըստ իմէք կ'հաստատէ եւ պատմութեան շարքն էլ, «Զկնի որոց (Արայի ծննդենէն ետքը) եւ այլ բազում կեցեալ ամաց (Արամ) մեռաւ:»

Արամայ գործոց քաջութիւնները անդ առաջին Հայոց սահմանները կ'ընդարձակեն յամենայն կողմանց, ուստի եւ օտար ազգերը մեր աշխարհքը նրա անուամբը կը կոչեն:

Այս ամէն քաջագործութեանց եւ դիւցազնական արիութեանց առաջին յաղթանակը կ'հանդիսացնէ «յՆզերս սահմանացն հայոց» Նիւքարն կոչեցեալ մադխի վրա արած պատերազմը. ուր մեդացւոց վրա յաղթութիւնը վաստակելով, ձերբակալ կ'անէ նոցա առաջնորդը եւ ի ցից երկաթի կ'հանէ ի ծայրս աշտարակի Արմաւիրայ պարսպին:

Այս պատերազմէն ետքը սարսափելով Նիւքարի բոլոր

աշխարհքը, որ կ՚ակնարկէ յարևելս, մինչև Զարասպ աս-ուած լեառը, Արամայ հարկին տակը մնան մինչև Նինոսի թագաւորութեան օրը:

Այս ամէն արևելակողմն եղած Նիւքարայ երկիրը այս-պիսի անարգ պատմութեան յիշատակով սրտերի մէջ ոխա-կալութիւն կ՚սնուցանեն Արամայ դէմ. երկրորդ՝ նախան-ձորդ էլ յորդց Հայաստանի կողմնական երկիրների մէջ նոյն-պէս հայկազանց միապետին դէմ, Նիւքարայ անարգական կախաղանը ի տեսիլ անցաւորաց՝ ճակատէն պատն ի վայր վարսուած:

«Նինոս Թագաւորեալ ի Նինուէ, յիշատակ քինու ըղ-նախնւոյն իւրոյ զԲէլայ (ասէ) ունէր ի մտի... բառնալ զա-մենայն ճետ սերմանեալ յարանց քաջին Հայկայ»:

Բայց հայկազուն միապետը բոլոր այս ճիւաղական եր-կիւղները պատերազմի ասպարիզին մէջ թշնամեաց արիւնովը լուաց. Նինոսն էլ իր սրտի մէջը սարսելով, համարձակու-թիւն կ՚տայ Արամայ վարսակալ մարգարտէ ածել, և աշ-խարհի յաղթող հսկայից կարգը՝ երկրորդ կոչել:

Սրանից յետոյ էլ պատերազմի ասպարէզը յԱսորեստան կ՚բանայ, իր ընտիր երիտասարդները, որ ի տէգ նիզակի կա-մակարողք, և արևելեան պատերազմին կոտորածը տակաւին իրենց հոգւոյն երևակայութիւնն էր, ու դիականց արիւնը բոսորագոյն դեռ ի ծայրս նիզակաց՝ երես բռնեցին Բարշամայ բանակին վրայ, չեմ կարծել թէ այս առաջինն էր, որ Կոր-դուաց լեռները հայոց ոտից կոխան եղան, վասն զի սրանք երես դարձնել չ՚գիտէին, վասն որոյ և Բարշամն էլ դիականց կարգը փոխեցին.— դուցէ մեծ աստուածընդդիմութիւն էլ գործեցին սրանք, վասն զի՝ ճշմարտին Աստուծոյ անուն և պաշտօնը պատճառ եղան Բարշամայ ընծայեցուցանելու, և Բարշամայ սպանմամբը Ասորի ժողովրդոց Աստուած մի յա-րուցանելու:

Այն Արամ մեր Թշնամեաց երկիրը այսպէս գրաւեց, բայց նոքա իրան Թշնամի շարեց, նրանց պատերազմական ոգին չէջցոյց, բայց նախանձու սրտերնին վառեց, անցաւ արևմուտք, վան գլ՝ արևելք, հարաւ պատերազմական յարձակմանց դէմ մեծ պատուարներ հաստատած էր սխական և կազմեաց ցեղերը.—Նա յերկար Թնալով արևմուտք, պատերազմի կ՚բռնուի Տիտանեաններ հետ, Պայապխ և Կաղէս փախստական կ՚տանի ասխական ծովուն կղզեները.—Ո՞ գիտէ Թէ այս ամէն պատերազմներ մէջ Արայ չէր կըԹուել, ո՞ գիտէ Թէ իր հօր վարսակալութեան ժամանակը նրա հետ միատեղ Նինուէ չ՚ձանապարհորդեց վաղեմի աշխարհ.քին զարմանալին քաղաքը, և իր գեղեցկութեանը անդ առաջին հարաւ Շամիրամ աշխարհի հեշտութեանց Թագուհին.—բայց այս ամէնը կ՚լեն պատմութիւնք, որ բարբառին առասպելք:

## Բ.

Առասպելական Շամիրամի պատերազմին մէջ ներկայացուած է Նինուէ հանդերձ ամենայն փառքին, ուր մեծ խնամք ունենի Շամիրամին՝ որ Նինոսայ երկրորդն էր:

Մեր խորենացի պատմագիրը քաղուած կըտայ մեզ Շամիրամայ գործոց պատմութեան հատուածքը և նրա մահը ի Հայաստան՝ իր որդւոյն ձեռքով, ուստի Առնուշաւանայ վրա մեր հնախօսութիւնը կը կազմենք:

Հայաստանը այնպիսի հրաշալի եղած էր Շամիրամայ հեշտութեանը իր գեղեցկութեամբը, օդոց քաղցրութեամբը և աղբերաց կարկաջասահ դնդնջմամբն ի լերինս և ի դաշտս ծաղկաւէտս, մինչև ինքն իսկ իր Թագաւորական գահը և

տէրութեան կառավարութիւնը մարաց նահապետին տալով, ասաց Հայաստանին համար, «Պարտ է մեզ յայսպիսում բարեխառնութեան օդոց և ի մաքրութեան ջուրց և երկրի քաղաք և ապարանս շինել բնակութեան, որպէս զի՝ զչորրորդ մասն բոլորման տարւոյն որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցանեմք ի Հայս, և զայլս ևս երիս ոլորմունս օդոյն զովութեան տածիցեմք ի Նինուէ» Խոր. Ա. գիրք. գլ. ԺԶ:

Եւ արդարև այս հրաշալի երկիրը զոր Շամիրամ իր հեշտութիւնը կատարելու տեղի ընտրած էր, իր թագաւորութիւնը կորսնցնելու էլ այս պատճառ եղաւ, և ինքը որ Ասորեստանի գահը՝ իր այրը սպանելով զՆինոս, յանիրաւի յափշտակած էր, նոյնը վերջապէս իր մոլութեանը զոհ անելու կէս նպատակի վրայ, իր որդին էլ հօրը մահուն վրէժը առնելու մտօք, զինքը սպանելով, նոյն գահը իրաւամբք յափշտակեց Զրադաշտի ապստամբութեամբը:

35805

Շամիրամ Ասորեստանի դշխոյն որ Խորենացւոյ ասածին պէս «Ո՛չ այնչափ ինչ ի սպանանել զնա (զԱրայ) և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զըռամբ ածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ» առաջին անգամ յարձակեցաւ Հայաստան բազմութեամբ զօրաց, և կռւոց պատերազմի մէջ իր սիրահարեալ գեղեցիկն Արայ, յետ այնորիկ իր մոլեկան ցանկութիւնը կատարելու համար, Արայի որդին քովն առաւ տանելու տարուան, և ամառն էլ Հայաստան անցնելու բաղձանքով կ՚շինէ Շամիրամակերտ քաղաքը իր ժամանակի գրեթէ եօթն հրաշալեաց զմին և «յետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին ամրագունիւք պարսպօք հանդերձ դրամբք պղնձակերտիւք» և ահա այսպիսի քաղաքը Հայաստանի նման գեղեցիկ երկրի մէջ տարուէ տարի վայելելու համար, իր թագաւորութեանը կողմնապետ Ասորեստանի և Նինուէի կը կարգէ զԶրադաշտ մոգ և նահապետ

մարաց․ և իր երկրի կառավարութիւնը սրա ձեռքը կ՚թողու երկար ժամանակ, մինչև որ յիշեալ կողմնապետը բռնանալով թագուհւոյն դէմ, և ինքն յանկուցանելով գուցէ Ասորեստանի նախարարները ու երկրին մեծերը, որոնք ինչպէս կ՚երևի, երես դարձուցած էին ի Շամիրամայ, երբ որ ինքը իր վաւաշ բարուց համար յանդիմանութիւն լսեց իր որդիքներէն, և բռնութեամբ կոտորեց, մանաւանդ զի՝ իր ցանկասէր ախտը յայտնապէս պաշտելու համար, իր այրը Նինոս ձգեց թագաւորութիւնն ու փախաւ:

Եւ ահա այս ամենի համար իր կողմնապետի հակառակութիւնը սաստկանալով իրեն իսկ դէմ, թէ և Խորենացին կողմնապետի սխալանքի համար կ՚գրէ, բայց ինքն էլ չի նշանակեր թէ ո՞րպիսի սխալանք, որ և Շամիրամայ միակ որդին անգամ, որ թագաւորութեանը ժառանգ թողած էր ի կոտորածէն, կողմնապետի հետ միաբան լինելով, Շամիրամ նրա վրա պատերազմի կելնէ․ որ պարզապէս ամենի վրա բռնանալու կ՚խորհէր, բայց պատերազմը կ՚սաստկանայ Զրադաշտեանց կողմէն, և Շամիրամ Զրադաշտի երեսէն փախստական դառնալով ի Հայս, ուր հետն էր և Արայեանն Արա Անուշաւանայ հայրը իր հայկական զօրքերելով, այս ժամանակը պատեհ ժամանակ կ՚գտնի Շամիրամայ որդին՝ Նինուաս, որ իր եղբարց անպարտ արեան վրէժը առնելու համար՝ իր մայրը կ՚սպանի ու ինքը կ՚թագաւորի Ասորեստանի վրայ ի Նինուէ:

Այս ամէն Շամիրամայ անցից վէպը կայ Մար Աբաս կատինայ Ասորին, և Խորենացւոյ ժամանակի մեր աշխարհքի առասպելն էլ (զոր առաջի գլխի մէջ յիշած ենք) կ՚արդարացուցանէ զԱսորին:

Ի՞նչ է առասպելը, այս պատերազմիս մէջը յաղթուելով Շամիրամ, հեռևակ կ՚փախչի, բայց սաստիկ ծարաւութենէն երբ որ կ՚պապակի ու ջուր խմելու կ՚յապաղի, սու-

սերունդք կ'հանեն իրան. սրանից տեսնել կ'լինէ, որ մեր օրովը անլուր ի Հայաստան, «Զյուսութեան, ասէ, ի ծովն, և բան ի նմանէ, ուրուք Շամիրամայ ի ծով. այլ թէ ախորժես տեսանել, և շամիրամ քար առաջին քան զՆիւ-բէ» 1) որու մինչև հիմա լսած տասապեններում մէջ նշմա-րանքն էլ չկայ:

ՍԵՐՈԲԵԱՆ ԽԱՉԻԿԵԱՆԻ

Այսպէս Արայեանն Երանջէս Շամիրամայ հետ այս պա-տերազմի մէջ կ'սպանուի, որու յանձնել էր նա իւրն Շա-միրամ Հայաստանի վերակացութիւնը իր ատրապետութենէն ետքը, և նրա ընտանիքն էլ իբրև արքունի տուն Հայաստանի՝ Նինուաս յարքունիս կը գրաւէ. և կը գերի կ'տանի նրա ըն-տանիքը ի բաբելոն, որոց հետն էր Անուշաւան Սօսանուէր, զոր Արայ՝ իր մեռնելէն առաջ ժառանգ կ'թողու իր հայրենի տէրութեանը. ուր «Այս անուշաւան, խորենացին կասէ, բաւական ժամանակ արհամարհութիւն կրեալ ի Զամե-սեայ, տուայտի ի դրան արքունի» 2):

Այժմ Անուշաւան իր հայրենի պետութիւնը ձեռքից հա-նած, ինքն էլ գերեվարութեամբ կ'տուայտի ի բաբելոն, իր թշուառ հօր մահը յուշ բերելով, կ'սարսափի ինքնին, բայց իր քաղցրիկ հայաստանը անմահ մնալով իր սրտի և հոգւոյ մէջ, իր նախահօրն Արայի վերատին կենդանեաց աշխարհք գալուն յիշատակն էլ ի մտի ունելով, միւս կողմէն էլ իր հայրենիքը քսան և հինգ տարու չափ ճնշուելուն դէպքերը՝ ուշը կը քաղէն, և աչաց արտասուքը այս անգիւտ կորուստ-ների վրա գետօրէն կ'իջուցանէին, որու կ'օգնէր իր գերեվա-րութեան վիճակն էլ:

Բայց այս վերջինիս վրա ի լոյս միայն գաղափար ունե-նալով, շատ դէպքերն էլ մութն էին իրան:

Իր կալանաւորութեան տեղն էր յարքունիս, և ուր ի

1) Խոր. գիրք Ա. գլ. ԺԶ: 2) անդ. գիրք Ա. գլ. Ե:

Զաւենայ արհամարհութիւն կը կրէր, անագան ուրեմն չափ դրին զիք Սօսանուէրն Անուշաւանայ, և իրանց նուիրական դիւցազնին ազատութիւնը ոչ ի սպառ մատնելով մայրապանն Զաւենայ, գութ ձգեցին Զրադաշտի սիրտը և նրա սէրը շարժեցին Հայաստանի անտէրունչ նահապետին վրա:

Դեռ նոր արեգակը իր գագաթնակէտ ճառագայթները կ՚իջուցանէր դէպի արևմտեան ովկիանոս և օրուայ երրորդ բաժինը կ՚ընդմիջէր, երբ որ բոլոր բաբելոնացիք կէս աւուր տօթոյ խստութեան երեսէն Թափկացած, խումբ խումբ դէպ ի կախաղանաւոր բուրաստանը կերթային երեկոյեան զովաբար հովը ծծելու, որ Հեսպերեան պարտաստանէն կը փչէր:

Խանդաղատական աչքով կ՚դիտէր այս ժամը Անուշաւան, և մտքով իր ալքունական քաղաքին մէջը կ՚շրջէր, ուստի աչքին տեսածը մտքի եղածին հետ չմիանալով, արտասուք իր արտեւանունքը կ՚ծանրաբեռնէին:

Զրադաշտ որ երկրորդն էր Նինուասայ, և իւր հաւատարմութեան զինն էր այս պատիւը, որ անարժան և տիրադաւ դշխոյէն իրաւամբք յափշտակելով Նինոսի գահը, նրա օրինաւոր ժառանգին սեպհականեց զայն, Անուշաւանայ կալարանին դէմառդէմ պալատի մէջը կ՚նստէր, և զԱնուշաւան իր պատիկոնէն կ՚դիտէր այս դժբաղդ վիճակին մէջ:

Այս ժամուս մէջ, շատ ծանրացած կերևէր Անուշաւանայ վրա գերութեան վիճակը, նորէ նոր միտքը կը գային իր միապետական իշխանութիւնը, որու ժառանգ ընտրուած էր իր հօրէն, միտքը կ՚գային թէ ի՞նչպէս բաբելոնի միապետական թագուհին «վասն առաջին իւրոց խանդաղատանացն առ Արայն գեղեցիկ» որ իր նախահաւն էր, իր հօրը անունն էլ Արայ կը կոչէ, և մտերիմ իրան ճանաչելով, կարգել էր նրան ի վերակացութիւն աշխարհին, որ մինչև անգամ հաւատարմութեամբ մահը յանձն առաւ նոյն իսկ թագուհւոյ

հետ. իսկ ինքը նոյն աշխարհի ժառանգը և միապետական տէրը լինելով, բաբելոնի մէջ իրան ճանչցող չկայ. և արհամարհութիւն էլ կը կրէ նոր թագաւորէն. բայց չէր մոռանալ այս ամէն խորհրդածութիւնների հետ և զայն, թէ նա ինքն Շամիրամ իրեն մէկ փափաշոտ և տափական ցանկութեանը՝ որ առ իւր նախահաւն, բոլոր Հայաստան հանդերձ միապետական իշխանութեամբը զոհ արուց, և իր այս ներկայ գերեվարութիւնն էլ նրա երեսէն կը քաշէ:

Զբօսանէր բաբելացիք փողոցների մէջ խումբ խումբ միգուած, թագաւորը տեսնելու կ՚յապաղէն, որ այն ժամանակը կ՚պատրաստուէր որսի գնալու. նշան կ՚տրուի թագաւորի դուրս գալուն, և ահա՛ նախարարք ամէն կողմ և պատրաստ իրանց հետևակ ու հեծեալ պատանիներով. բայց այս նեղ բոպէին թագաւորի երկրորդը հիւանդանալ կ՚ձևացնէ և հրաման կ՚շնորհուի իրան հիւանդութիւնը դարմանելու. Թմբուկները կ՚հնչեն, թագաւորը իր աշխպարանց նժոյգին վրայ հեծած աղեղնավարժ պատանիներու խումբով, բովանդակ բազմութիւնը կ՚ճեղքէ կ՚անցնի, և ահա՛ ամէնքը կը ցրուին ի զբօսանս:

Աղմէն ի միտ զԶրադաշտ՝ դէպ Սօսեացն Արմաւրայ, որոց ծունր կ՚կրկներ բոլոր Ասորեստան. կ՚հասկանայ, որ անեղապարտ կալանաւորի համար անմահից հարուածները իւր խիղճը կ՚խայթեն, և որ ի ներքին մարդն իւր՝ յայսպիսի կրից բռնուել էր, աչօք բացօք էլ Սօսանուէրն Անուշաւան կ՚գտնէր ազատն՝ անազատ կալանաւորութեան մէջ, ուստի առ ժամն նրան գէթ մխիթարելու միտք և իր սիրտը ի հալուածոցն սփոփելու, կը կոչէ առ ինքն զԱրայեանն Անուշաւան:

Զրադաշտի պալատը անարգել կ՚բացուի հայ դիւցազնի առաջը և կ՚հրաւիրուի ի ներքս, ուր ինքն ի գահոյս կ՚բազմէր Զրադաշտ. որ ի ներքուստ խանդաղատելով Անուշաւա-

նայ ծաղկահասակ մարմնոյ բարեձեւութեան վրա և կերպարանաց դիտակին, առ երեսս դէմքի խոժոռութեամբ նշմարանք արուց ընդունելութեան, և իսկոյն դիւցազնն Հայկազուն ի ծունր խոնարհեցաւ գահին որպէս երկրորդական թագաւորին:

Նա մինչդեռ Անուշաւան իր մէջքի դաշոյնը ընդ ոտիւք կամէր դնել Զրադաշտայ, զրադաշտ միապետական ժառանգին շատ չտեսնելով այն ազատութիւնը, զոր միապետք իրանց վրայ կը կրէին ի դրունս թագաւորաց, արգելք եղաւ դաշոյնը գետին դնելու, և այսպէս սկսաւ խօսել նրան ժըպիտ կերպարանքով:

«Քաջամնգդ Հայաստանի, որչափ որ աստուածք քու հայրենեաց բաղդը մեր ձեռքը տուին, բայց նրանք կ'ապանան մեզի տակաւին կապել ի սպառ մէկ ազգի միապետական ժառանգի սեպհական ազատութիւնը, երբ որ այն ազատութիւնը պատերազմի մէջ պարտութեամբ մեր ձեռքը չէք տուած:

Այո պարտեցաւ քու հայրդ Արայ 1) պատերազմի մէջ, և Ասորւոց քաջերէն մահ ընկալաւ, բայց այս ճշմարիտ է, որ մեր պատերազմը Հայաստանի վրա և նրա նահապետի դէմ չէր, և Նինուաս, որու աթոռոյն հաւատարիմ եղայ ես մինչև հիմայ ի կեանս և ի մահ, չէ թէ քու հօրդ մահուանն էր վրէժխնդիր, այլ իր եղբարց և մեծ տոհմին Նինոսի արեան փոխարէնը թափելու՝ զհետ էր իր խառնակեաց մօրը վաւաշոտ Շամիրամայ, յորմէ ես ինքն ապստամբեցայ ընդդէմ նրա թագաւորական իրաւունքը յափշտակելուն, որ Նինոսի գերդաստանի արեամբը Ասորեստանի թագը դնեց. ուստի աստուածք էլ ներեցին մեզ, որ ազգի անիրաւութեամբ յափշտակուած թագը՝ իրաւամբք յետս յափշտակենք. և Շա-

1) Կարդոս, որ և Արայ Արայեան ի Շամիրամայ: Խոր. ա. գիրք. գլ. ի:

միրամայ արեամբը իր կեղտ անունը լուանանք մեր ահեղ թագաւորութեան երեսէն:

Բայց աստուածք չեն ներել. նորէն կ'ասեմ, որ ազատ ազգի ազատութեան սուրը իր իշխանէն կապտենք. երբ որ նա իր զօրքովը ու հարկի բռնուել է այսպիսի պատերազմի մէջ, որ մանաւանդ մեր օրովը ի հնազանդութիւն էր Ասորւոց գահին:

«Յուշ Տէր, թէլ խօսից առաւ Անուշաւան, ի՞նչպէս ուեմն այդպիսի հնազանդ և հարկատու ազգի իշխանական տունը գերի կերթայ իր հաւատարմութեան համար որու ես այսօր միակ եմ ժառանգ:»

«Դեռ իմ կեանքս չունին գրեթէ քսան լուսնի բոլորում, բայց ես իմ նախահաւուս օրերէն գիտեմ, որ Արամայ ընդարձակած երկրին ազգը հլու և հնազանդ մնաց Ասորւոց գահին. որու իշխանական սրոյն ժառանգութիւնը այսօր ինձ մնաց, և իմ կալանաւորութիւնն էլ, վեհանձնդ Զրադաշտ, ինքնին էք վկայ, որ ապստամբութեան պատերազմ յարուցանելու համար չեղաւ:»

«Իսկ եթէ իմ նախահօրս ժամանակի Ասորւոց դշխոյի յարուցած պատերազմը ասես, յորում ճակատ յարդարեալ զօրացն Արայի Շամիրամայ դէմ, այս էլ ոչ թշնամութեան համար էր, զի ինքն իսկ Արամ նոյնպէս իր երկրի իշխանական սուրը Նինոսէն շնորհ առած էր ինչպէս որ նորա ժամանակի հին զօրավարները կ'վկայեն. բայց այս պատերազմին էլ թշնամութեան պտուղ չէր կամ ապստամբութեան հայոց կողմանէ. այլ շատ տարիներով կը լսէր դշխոյն Արայի գեղեցկութիւնը և կը ցանկանար նրան, բայց կասեն որ յայտնի չէր անել:»

Աւելի այս պատճառաւ երբ որ Նինոս մեռնելէ ձգելով, գրեթէ փախստական կերթայ, սիրահարեալ թագուհին շատ

ժամանակ հրեշտակադնացութեամբ իր աթոռը գալու կհա-
մոզէ իմ նախահայրը։»

«Սորա մերժումը կ՚լինի պատճառ այն մեծ և առաջին
Շամիրամայ պատերազմին Այրարատեան դաշտին եզերքը,
ուր Շամիրամայ զօրաց բանակին սարը, այսօր Շամիրամայ
անունով կ՚ճանաչուի, և պատերազմի ասպարէզը իմ նա-
խահօր անունը կը կրէ. ուրոր իր մահկանացու կենաց արիւնը
թափեց, և անմահ դիւցն օգնականութեամբ այսօր զօդ կշնչէ
կենդանեաց աշխարհքին մէջ, որոնք մարդոց կենդանութեան
շունչը ի ձեռին ունին։»

«Արանով յոյս անմահ է մեր անմահ աստուածոց կա-
րողութեանը վրա, և հաւաստի գիտելով, որ նրանք լեզելով
գդէն Արայի, կենդանութիւն տուին, և այսօր ի կարգս ան-
մահից կ՚վերադասի, իսկ մահկանացու աչքերը չե՛ն կարող
զինքն մարդոց կարգը տեսնել, քաղդէական մոգութեան
կ՚գիտեմ, որոց վարդապետութեան գլուխ ձեր մեծութիւնը
կ՚ճանաչուիք որոց միջնորդութեամբ աստուածք իմ հօմանուն
հայրս էլ լեզելով կենդանութիւն տան, որոց յարալէզ պաշ-
տօն ունին. դեռ արևը գիշերային չորս շրջան հազիւ կատնու
իմ հօրս մահուանը վրա. այս միայն կ՚մոռնամ, և այս միայն
իմ ճշմարիտ աղատութիւնս կ՚համարիմ, թէ որ վեհու մո-
գական գիտութիւնը գդէք այս ծանր խնդրոյս հաճեցնեն,
հիմա որ իմ անձս է ձեր ձեռքը, այն ժամանակը իմ կամքս
ու ինձանով բոլոր Հայոց սիրտը կ՚խոստովանիմ, որ ձեր ձեռքը
կը լինի։»

«Իսկ որ ինչ իմ նախնեաց քաջութիւններուն կ՚վերա-
բերի, որոնք գուցէ պատճառ պիտի լինին ձեր առաջին այս-
պիսի շնորհքը զլանալ ինձ, և ինձանով այնպիսի ազգի, որ
պատերազմի մէջ զէնք վար դնել չե՛ն գիտել, մինչև իրենց
արեան վերջին քաթիլքովը յաղթութիւն չգնեն, այն ամե-

Նուն ես անտեղեակ եմ, և իմ նախահայրս միայն գիտէր, որուն ես չ'հասայ»:

Զրադաշտ տեսնելով որ Անուշաւանը իր նախնեաց քաջութիւններու վրայ տեղեկութիւն չունի, և Արայի վերաւորին կենդանութեան լուրը այլ ընդ այլոյ իր ականջը հասած է, և թէ՝ այնպիսի հաւաստիք տուաւ պատմութեան, որ Արամայ սերունդը իր ժամանակէն մինչև Անուշաւան իբր հարկատու լինէին Ասորւոց իբրև մի ստորադրեալ ազգ, ուզեց որ Հայոց Նահապետի ուշը զարթնցնէ և նրա նախնեաց քաջութեան գործքերը դնէ առաջի, որով այս երկու ազգը մէկ մէկու վերաբերութիւն ունեցել են:

Այսպիսի անցքի ծայրն էլ բռնելով Արամայ զարմանազարմ քաջութիւնները կ'հիւսէին, որ անդ զառաջինն Նինոսի սիրտը զարհուրեցուց, և ոխակալութեան հիմք դրաւ Հայոց դէմ, կուզէր որ իր պատմութեան թելը անտի սկսանի. բայց երբոր լսեց, թէ Շամիրամայ անուամբը բուն իսկ Հայկայ երկրին մէջ լեռները անգամ անմահացած կ'կոչուէին, և Հայկայ թոռներու նման վրէժխնդիր կորիճներու բերանը կ'պատի իրենց միապետական թագուհւոյ անունը, սրանով էլ գուշակեց Զրադաշտ Հայոց սրտի սերտ մտերմութիւնը Ասորեստանի գահին հետ. ուստի իր երևակայութեանը մէջ նորէն կենդանացնելու համար Շամիրամայ պատերազմի և Արայի անկման գաղափարը, նոյն իսկ պատերազմի ասպարիզին և երկրի բնական դրից վրայ զմայլելով, ուր որ երկոքին հանդիպակաց լերինք պատերազմի ախոյենից անուամբը կ'պսակուին, ուզեց որ նրա նկարագրութիւնն առել տայ Անուշաւանայ, և ընդհանրապէս Արայի դաշտին ստորագրութիւնը նրա բերնէն լսի, ուր ինքը երբեմն պտտել էր անձամբ իր զօրավարութեան ժամանակին: — Անուշաւան էլ այսպէս սկսաւ խօսել:

«Արայի դաշտին գեղեցկութիւնը ո՞վ կարէ պատմել,

եթէ ոչ՝ Անմահից լեզուք. մեք որ նորա մէջը ծնած ու մնած ենք, մարդկային հանճարով չեմք կարող անմահից հանճարովը զարդարուած երկրի՝ իր բնական դիրքին մէջ՝ գերբնական գեղեցկութիւնը նկարագրել. մեր նախնիքը անցած գնացած են, բայց Արայի դաշտը մտածիդ պէս, նրանք ամէնքն էլ գրեթէ մէկ մէկ անմահացած հսկայ կանգուն կ'գտնես, վասն զի՝ աստծիս պէս՝ այս բոլորակ դաշտին եզերքը բռնող լեռները ամէնն էլ մեր նախահարց ամէն մէկի անունը իրանց վրայ առած, նրանց անունովը կ'ճանաչուին, որը նրանց քաջութենէն առնելով, որը աշխարհաշինութենէն, որ մէկն էլ նրանց երևելի դէպքերէն. որոց մեծն և առաջին՝ Ազատ լեառը որ իւր նախահաւուն Ամասեաց անունովը կպանծայ՝ գուցէ ի պատիւ նոյեան տապանին՝ իր ազատ գագաթովը կապոյտ երկնագաւառին մէջը կ'շողայ, և ցորեկուան լուսոյ ջահը իր շողշողուն ճաճանչներով ամէն լեռներէ յառաջ ի պատիւ նոյեան տապանին, կասեմ. զոր ջրհեղեղէն ազատեց ու ազատ առուեցաւ, նորա ձիւնափայլ կողերուն նախ ողջոյն կ'իջնի. նրանից ետքը կ'տեսնես. որ Արագած լեռան Արեգդէմ կողերը կանաչազգեստ կ'փայլին. որ իմ մեծ նախահօր անունը կ'կրէ, և իրէն լուսակիզն արօտներու մէջ մեր Արմաւրայ հօտը կ'մակաղէ ու բիւրակնեայց յաւերժական աղբերց միտահոս վտակներովը կ'զովանայ, և նրա անթիւ ու անհամար ջրվէժներու զառ ի վայրերը դաշտականաց վրանները արևադարձէն ետքը՝ շարքէ շարք կ'բռնեն. — Ահա սրա հիւսիսային ստորոտը նստեց իմ նախնեաց գերդաստանը և իր առաջին կ'դիտէր մեր նախնույն Գեղամայ հովասուն վայրաց բարձունքը արևելքի կողմէն, յորմէ մեզ ժառանգութիւն մնաց Արմաւիր:

«Ականատեսներէ հասած է մեզ թէ իմ նախահօրն Արայի պատերազմի ժամանակը զօրաց խառնաձայն գոչումը և նետից շառաչիւնը մեր բնտանեաց տոհմին ականջը կ'թնդա-

ցներ, վասն զի՝ այս տեղէն Արագածու արևելեան ստորոտին վրա մօտակայ է լեառն Արայի պատերազմի ասպարէզին տեղը. և որովհետև այս երկու սարը իրարից Քասաղ գետը կ՚անջրպետէ, մեր նախահարց բնակութիւնը իրենց բանակատեղի ընտրած էին Արայի քաջերը իբրև թշնամիէն աներկիւղ տեղի. և գետին անցքը մինչև պատերազմի կեդրոնը աղեղնաւորաց շղթայով կը բռնէին:

«Արայի լեռան առաջը կ՚տարածուի ընդարձակ դաշտը մէկ կողմէն մինչև Արմաւրայ գետը, և արևելեան կողմէն մինչև Հրազդան, որու միւս կողմը կ՚տարածուի նոյնպէս Արայի դաշտին սահմանը մինչև Շամիրամայ լեռը, որ նոյն Շամիրամայ զօրքը բռնած էր, և ահա այս երկրամին դաշտը պատերազմի ասպարէզ դարձաւ մեր ու Ասորւոց քաջերին. յորմէ և այս հանդիպահայեաց լերինք երկու բանակաց գլխաւորների անունը իրանց վրայ առան այսպիսի պատահման ժամանակ. Այս լուսնաձև դաշտերը լեռներու մէջէն և լեռները ամպերու մէջ մեր քաջաց կարմիր արեամբն աւելի հիմա կ՚փայլին, քան թէ արևի դեղին ճաճանչներով. որոց տեսքը և անցից յիշատակը դիւցազանց սիրան անգամ մագնիսի պէս դէպ ի բանց կ՚քաշէն, թող թէ մահկանացուաց սիրտը և հոգին:

«Իրաւ է, որ ասած է, թէ զօրաց յաղթութեանը աւելի ձեռնտու կ՚լինին երբեմն տեղւոյն դիւրութիւն և ամրութիւնը. մեր զօրապետքը շատ անզգոյշ գտնուեցան այս մասին, որ իրանց աղեղանց շատութեանը վստահանալով, այնպիսի լեռնափակ սարադաշտը ձգեցին սիրահարեալ թագուհւոյն ձեռքը և զոհ արին Արային:

«Այս դաշտին մէջն է այն տեղին, ուր որ իմ նախահայրը Ասորւոց քաջերէն խոյս տուաւ, և հիմակ դեռ Արամախոյս [1] կ՚կոչուի, Գեղամայ լեռներուն Արևմտեան ստո-

[1]) Այժմ Արամու, գիւղ ի Կոտայս:

րոտը. Թէ որ մեր աղեղնաւորք նախազգուշութեամբ Երասխայ մուտքը Շամիրամայ յառաջը բռնէին, ոչ Շամիրամը կրնար իր զօրքով Արայի դաշտը մտնել, և ոչ յաղթութիւնը վաստակել: Բայց այս իսկ է առիթը, որ մեր տոհմին պատերազմողք դեռ պատերազմի մէջ յաղթուիլ տեսած չունէին, վասն այսորիկ և յայս յամենայն դէպս անզգոյշ եղան, միայն իրենց զօրութեանն ու աղեղանցը վստահացան:

«Երկար սրանց վրայ խօսիլ հարկ չկայ, որոց ձեր մեծութիւնը, առաց Անուշաւան Զրադաշտին, ձեր պատերազմական հասակին մէջ նախամերձ ու նախատես եղած էք. մեք լսածներս կ՚ պատմենք, բայց դուք, Տէր, պատերազմի յաղթական կողմին մէջ անձամբ եղած էք, և այն յաղթութիւնը Թէ որ Աստուածք վճռել էին, ձեր հմուտ գլխոյ խորհրդոյն պտուղն էր: Միայն ձեր բաղձանքն այս էր Թէ Շամիրամայ անունով սարը ինչպէս է, որ Թշնամի երկրի մէջ կ՚ յիշուի. աՀաւասիկ յիշուելուն պատճառը և մահկանացու անուններու անմահանալուն իսկական հիմը, որով աւելի Արայի և նորա քաջ քաջ աղեղնաւորաց անուանքը անմահացնելու սիրովը յափշտակուած կ՚ յիշատակէ մեր հայրենիքը, քան Թէ Շամիրամայ:

«Բայց կասեն Թէ Շամիրամ Արայի վրայ սիրահարուելուն պատճառաւ, նորա նաժիշտները Արայի սպանեցին նախարարաց խորհրդովը, և այս Արայի բանակը բորբոքուեց Շամիրամայ դէմ ու այն մեծ պատերազմն եղաւ, այս ամէն անցքի վրայ մեք հաւաստիք չունինք»:

Կուզես վերջ տալ այսպիսի գեղեցիկ նկարագրութեան, առաց Զրադաշտ, որ նախնեաց քաջութեանց մնացորդներ իմ բերնէս ժողվես, չեմ զլանայ, աՀա կսկսանիմ:

# Գ.

## Զրադաշտ կ՝ պատմէ Անուշաւանայ Արամայ ժողովրդեան գործերը։

Հայոց քաջերի սերունդը դու մնացել ես, այսպէս ասել սկսաւ Անուշաւանայ՝ Զրադաշտ. և նրանց քաջութեանցն էլ դու ժառանգ պիտի լինիս, ուստի, նրանք ինչ որ արին Աստուածոց արդար իրաւանցը դէմ, նրանց արդար բարկութեան հատուցումն էլ կրելու քեզ դարձեալ ժառանգութիւն ձգեցին, թէ որ նրանց աշխարհական փառքերին հաղորդ եղած ես, նրանց հանելիք պատիժներին էլ մնացորդը դու պիտի կրես, և թէ և աստուածք իրանց նուիրական մահկանացուն անմահից դասը չեն անցնիլ էլ, բայց մահկանացուաց թշուառութիւններէ ազատ կ՝պահեն, բայց քեզ, Սօսանուէրդ դիցական, կամ մնան քո նախնւոյն Արամայ երջանիկ և յաղթական օրերի փոխարէնը՝ թշուառ կեանք և անազատ օրեր անցնել քու գերութեանդ մէջ։

Վասն զի նորա քանի՜ քանի գործքերը կ՝ պատմէին, զորոնք աստուածոց արդարութեան դէմ արուց և մեր քաջ քաջ նախնիքներու արիւնը երկիր թափելով, իր յաղթութեան անունը աշխարհ հանեց։

Ճիշտ փորձուած է այս մահկանացուաց գործքերու մէջ, և աստուածք էլ վրէժխնդիր լինելու չեն յուշացած, որ աշխարհակալ ամենի երկիրը յափշտակելու՝ իր մէկ իրաւունքը կ՝ համարի, և անմեղ արիւններով իր յաղթական զէնքը լուանալուն՝ փոխարէնը կառնու իրանից աւելի հզօր ձեռքից։

Ասորեստանի Միապետի նախնի սերունդը ջնջելու իր մէկ իրաւունքը կը համարէր Արամ, որ նիւքեարն էր — Մադէս. Նրան բոլոր բովանդակ Հայկայ կալուածքներէն սահմանամերձ

անլէն էլ իր աշխարհակալութեան քաղցը չէ՛ լցուեց․ այլ ․ այկայ աշխարհակալութեան ոգին կրող աղեղնաւորները ժողովելով, որոնք ի տեգ նիզակի կամակարողք, գնդուքեարն կը կալանուորէ, և ասորի զօրաց ամբոխը կը սաստկէ, որոնց ես կը զօրավարէի հայրենեաց սիրոյն, և մեր քաջ պատերազմականը 'ի ծայրս աշտարակին Արմաւրայ վարսելով, մեր հայրենի աշխարհքը բովանդակ ի գերեվարութեան կ՚ պահէ․ որով և մեզ ինքը իրանից ապստամբելու առաջին ճամբան կ՚ բանայ, մինչև որ այն փոքրիկ հալածական և գերեվարեալ խումբէն Նինոսի ահեղ թագաւորութիւնը կը կազմենք․ և նորա մեզի անիրաւութեամբ ըրած վնասներուն՝ իրաւամբք և արդարութեամբ հատուցումն կտանք․ և կը հաւատանք, որ եթէ մարդոց անիրաւութեանց դէմ զրկեալ անձինք աչք կը փակեն, աստուածները աչօք բացօք վրէժխնդիր լինելու չեն յուշանալ։

Այս անցքը քու ցաւդ շատացնելու չեմ պատմել, այլ կասեմ, որ քու հիմկուան վիճակիդ մէջ մխիթարուիս, և Նինոսի օրովն անգամ, Արամայ յաղթական գործքերը պատմեմ․ որոնց դէմ քու նախահաւի օրէն մինչև հիմա քաշած ազգային հարկատուութիւնդ դեռ շատ փոքր է։

Այսպիսի աշխարհակալի յաղթութեան ոյժը գրեթէ հասնելու ժամանակ, և Ասորեստանը երկար ժամանակ նորա հարկի տակը ճնշուելէն ետքը՝ Նինոս կ՚ թագաւորէ․ բայց իր հայրենիքը որ կ՚ զարհուրէր Արամայ անունէն, ինքն էլ յիշատակ քինուոյն Բելայ միայն միտքը պահելով, նրանից ակնածութիւն կանէր։ Սրա համար էր, որ իշխանութիւն տուաւ նրան մարգարտէ վարսակալ դնելու, և իմ երկորդական պատիւն ունենալու։

Ո՛վ թէ և Ասորեստանի վրա յարձակող թշնամիքը որ չորս դին պատել էին, և հարկաց խստութեամբ մեր շրջականները անապատ կ՚ դարձնէին, Արամայ յաղթական ձեռքէն միան հալածական մինչև Կորդուաց լեռները գնացին․ և սրա

վարձն էր գրեթէ Նինոսի արած պարգեւը. ի՞նչ աշխարհակալութիւն չէր տեսնել Նինոս Բարշամ անուն հսկայէն. որի սերունդը Սեմրամի դաշտականներէն կ՚իջնէր. որ Նինոսի գահին վրա կ՚բռնամար չորս բիւր հետեւակօք և հինգ բիւր հեծելովք. բայց այսպիսի հսկայ իր բոլոր քաջութեան գործքերովը մէկ տեղ, Արամայ զինակիրների յառաջը կ՚մեռնի. և նրա տիրապետած երկիրները Արամայ արժանաւոր յաղթութեանը պարգեւ կ՚դրուի:

Հայոց միապետի այս յաղթութեան համբաւները, որ արեւելք ու հարաւ իր անյաղթ սրոյն սաստութեամբը բռնել էր, արեւմուտքի կողմէն Հայաստանի սիրտն էլ սարսափել սկսաւ. այս ժամանակ բոլոր աշխարհք ոտքի ելած էին Արամայ միապետական հրամանին տակ. ամէն տեղ իր երիտասարդաց նետերը տեղտարափ անձրեւի պէս կ՚թափէին և յաղթութիւնը ամեն պատերազմի մէջ իրանց յառաջէն պատգամաւոր կերթար, որով և փախստական մինչև Ասիոյ կղզիները կ՚թափէն Տիտանեան ցեղէն Պայապիս Քաղեայ. և այսպէս ուր որ իր յաղթութեան զէնքը կ՚հասնէր, այն ամէն տեղ հայերէն լեզու միայն խօսելու հրաման կ՚անէր:

Այսպէս բոլոր Ասորեստան գրեթէ պատնիշափակ արած էր Արամ երկրի երեք կողմերէն, այնպէս, որ այն ժամանակ Նինոսի մեծ թագաւորութիւնը նկուն եղածի պէս՝ միայն իր հարաւային սահմանին վրա թիկն տուած կեցել էր. եթէ Նինոսի աչքը չխտտղէին այս ամէն յաղթութեանց ցոլմունքը, և նախանձը չբորբոքէին Արամայ այսքան աշխարհաց տիրապետութեանց համբաւը, աստուածք անգամ այսքան ընդարձակ երկիրներ՝ մահկանացու և նոր յառաջեկած մէկ ազգի դիւցազըն միակ յաղթական սրով այսքան կասեմ, ընդարձակ երկիրներ չէին չափել. բայց ահա Նինոս յայտնապէս դէմ չըլաւ, խօսքով նրա հետ բարեկամութիւն կապեց. բայց սրտով զէնք առած էր նրա ամէն քայլափոխին դէմ. վանայսուրեկ

և Արամայ վարսակալ մարգարտէ ածել հրամայեց. որ նրա յաղթական սուրը նրանից յաւիտեան կապուէ. և ոչ միայն Հայաստանը ի հարկատուութեան բռնի, այլ թէ ձեռքէն գար, երկիրը հիմնայատակ, ու ազգը անուանաջինջ առնէր. վասն զի՝ «յիշատակ քինու գնախնւոյն իւրոյ Բելայ» միտքը ունէր. և այս պատճառաւ «յամն ձիգս» այս կ՚խորհէր:

Բայց ո՞ր թագաւորութիւն է, որի քակտումը իրանից չլինի, և մարդիկ մինչդեռ ուրիշ իշխանութիւններ կործանելու միտք կը դնեն, իրանցը ընդարձակելու, իրանցը, իրանք ձեռքով կը կործանեն այնպիսի դէպքերի յեղափոխութեամբք, որ դեռ աստուածք մահկանացու մարդերին չեն հաղորդած:

Բայց դեռ Ասորեստանի միապետի անկումը առաջին էր և թագաւորական գերդաստանին մէջ միայն կ՚ճարակէր այս չարիքը, դեռ Նինոսի անունը ամէն տեղ իշխողական էր, և իր կամքին ակնածութիւն կանէին իր արքունեաց մէջ. մինչդեռ Արամ, որ ձեր հայրենիքը Նինոսի իշխանութեան տակ 'ի հարկադրութեան դրած էր. իր կեանքն էլ նրա ձեռքը աւանդելով, յաղթութեան ու փառաց մէջ իր անունը ձգեց ու գրեթէ դիւցազանց աշխարհքը գնաց:

Իր քաջութեան ու փառաց անուանը որ ժառանգ թողուց աստուածոց սիրելին Արայ, քանի՞ քանի՞ ժամանակ Բաբելոն ոտք կոխած էր. և իր հօրը այն ամեն քաջութեան գործոց և ազգաց հետ պատերազմելու ժամանակ շատ տարինեով թագաւորական պալատը ելումուտ կանէր. ամենեցուն էր ծանօթ ու սիրելի՝ նախարարաց և մեծամեծաց քաղաքին՝ իր հրաշալի և դիւթական հայեցուածքովն և դիմաց գեղեցկութեամբն ի տեսիլ դիտակին, որ ամենուն մեծի և փոքու թագաւորական տանն և նախարարական բազմութեան սրտի և սիրոյ շնորհը առ ինքն կ՚գրաւէր, և իր հրաշադէմ մարմնոյ բարեձևութիւնը մեր աշխարհքի տիկնանց բոլորի հոգին

սրտէն կ՚ քաշէր. մարդկային սրտի այս ներքին կապակցութիւնն էր, որ Արայի ոտքը շատ տարիներով էլ Բաբելոնի գոներէն հեռանալ չէին թողուր, հասարակաց զարմանք ու գովութիւնը Արամայ քաջագործութիւնները այնքան չէին խօսել. որչափ որ Արայի անհամեմատ և աստուածոց հաւասար գեղեցկութիւնը, և ի՞նչ հայեցուածք չէր ի դէմս նորա, որ զօրոր Բաբելոնացիս չէ՛ հրապուրէր իր վրայ. եթէ և Նինոս ի շնորհս երևաց Արայի այնքան շնորհ կ՚առատաձեռնէր անոր հօրը Արամայ, որի քաջութիւնները իր սիրտը չէր տանիլ. իմ հաւանական դատումս իրաց հանգամանքը արդարացուցին անցած գնացած ժամանակների մէջ:

Ո՞վ կարէր գուշակել թէ Բաբելոնի երևելեաց կարգն էր և գլխոյն Նինոսի, և ամենէն աւելի զարկուած Արայի գեղոյն՝ ամենագեղն Շամիրամ. բայց ով կ՚յայտնէ մեզ այս, եթէ ոչ իրաց հանգամանքը, որ ժամանակին մարդոց աչքերէն ծածկուած ու սրտերին անգիտելի՝ աստուածոց միայն յայտնի:

Ո՞րպիսի դիւթ եղած էր Արայի գեղեցկութիւնը, որ Շամիրամայ սիրտը և քան զմագնիս աւելի իրեն քաշելով, նորա գեղովը զմայլած, բայց իր ախտը համարձակ պաշտել չկարողանալու համար՝ իր թագաւորութիւնը ապահովելու իբր պատճառ կ՚ գտնէ ու իր որդիքը կը կոտորէ. բայց ոչ միայն այս չէր պատճառ իր անմեղ զաւակաց արիւնը մննելուն, այլ և իր պոռնկական բարուց համար շատ անգամ նրանցից յանդիմանութիւն լսել էր, որում խրատգած եղել էին. զի Շամիրամ իր հոմանեացը հետ բարեկամութիւն կապելով, որդւոց համար փոյթ չունէր. այլ իր իշխանութիւն և գանձը նրանց կ՚ պարգևէր. Նինոս էլ այսպիսի պոռնկական գաղտնի ընթացքը տեսնելով իր կնոջն Շամիրամայ, և «խմացեալ զախ-

---

[1]) Խոր. Ա. գիրք ԳԺ. ԺԷ:

տաւէր բարս նորա և զչարաւէր, թողեալ զթագաւորութիւն՝ փախստական անկանէր 'ի Կրետէ» 1):

Ահա այս ապահովելու համար էր, և ոչ իր թագաւորութիւնը, որ իր որդւոց կոտորելուն պատճառ կ՚դնէ. և այս հոմանիքների առաջինը շատ յետոյ կ՚իմանանք, որ Արայն է եղել քո նախահայրը, յետոյ կ՚իմանանք որ Նինոս փախստական գնալէն ետքը՝ Շամիրամն մեր հրեշտակ կ՚առաքէ շատ անգամ «Առ Արայն գեղեցիկ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց» գալ առ նա 'ի Նինուէ կամ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի, որոց տիրէր Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և դառնալ մեծաւ պարգևօք և խաղաղութեամբ ի տեղի իւր» 1)

Բայց Շամիրամ ի՞նչ առիթով արդեօք կապուած էր այսպէս Արայի հետ, դէպքը բերնէ բերան կ՚խօսուի, զոր քու չգիտենալուդ համար՝ առանձին գլխով խօսիմ:

## Գ.

### Արայի հետ Շամիրամայ սիրահարութեան պատճառը:

Շամիրամայ Արայի վրայ սիրահարուելուն բուն պատճառը քեզ խօսելու, հարկ կ՚դնէ իմ վրայ նորա ով լինելը քեզ պատմել, նրա առասպելեալ ծնունդը, նրա արիասիրտ քաջութիւնները, որով քան զկանացի բնութիւնը գերազանցել էր, նրա խորամանգ հնարքները, որով Նինոսին թագուհի եղաւ ու նրա թագաւորական իշխանութիւնը հինգ աւուր մէջը յափշտակեց. նրա աշխարհահռչակ գործքերը, որով մեր

1) Խոր. Ա. գիրք. գլ. ժե:

ազգը ի ցածութենէ բարձրացրուց և իր անունը անմահացրաւ. որ մինչև աստուածոց անգամ զարմանք բերուց. այնպիսի մեծագործութիւններ, որով արդ Բաբելոնը աշխարհիս առաջին քաղաքը եղած է, և մեք կ՚զարմանանք նորա ճարտարմտաց և կանացի հանճարոյն վրա, այս ամենը բոլոր Ասորեստան Ամնասարի հսկաներու քաջ սերունդի կը տար, և զՇամիրամ՚կ ճանաչէր նոցա տոհմէն՝ դիւցազն մի մեզ հասած, ու կ՚սարսէինք նրա հաստաբազուկ նիզակէն և նորա անվրէպ նետերէն, մինչև որ Երայն գեղեցիկ քո նախահաւր նորա ինչ սեռից եղած գաղտնիքը վեր հանեց:

Ով գիտէր թէ Նինոսի պէս ահարկու թագաւորի արքունեաց մէջն էլ իր դշխոյն ամուսնական իրաւանցը անհնազանդութիւն կանի և Նինոսի ամօթանք կ՚բերէ. բայց գուցէ աստուածք վճռած էին, որ Շամիրամ Ասորեստանի գահին թագուհի և Նինոսի թագաւորութեանը ժառանգ ընտրուի. բայց սրանք ինչպէս որ ասացի, գաղտնիք եղած էին այն ժամանակը և Շամիրամ նախնի հսկաներից մէկը ճանաչուած էր, որ Նինոսէն առքը թագաւոր նստաւ, որի կին եղած էր ծածուկ. — պէտք է խոստովանել, որ այս գաղտնիքը Երայն բացաւ Բաբելոնի մէջ, ինչպէս ահա կ՚պատմեմ:

Շամիրամայ ծնունդը որ Ասորեստանի Ասկաղոն քաղաքի մէջ գերմարդկային եղած էր աստուածոց նախասահմանութեամբը, նա աղաւնիի սննդեամբ մեծացած ի չափ հասակի ինչպէս կ՚պատմեն. մեք գիտէինք թէ Շամիրամ այսպէս մեծանալով և զինուորութեան մէջ կրթուելով, մեր առաջի նահապետի օրովը (Նեբրովդի) Նինոսի քաջ զօրավարներէն մէկն էր որ նորա աթոռը ժառանգեց, բայց բանը սրա հակառակն է:

Նինոսի քաջ զօրավարը որ Շամիրամ կ՚կարծուէր, Շամիրամայ մայրը եղած է, Ամնասարի հսկայից զօրավարներէն մնացած: Սա սիրահարուած լինելով Նինոսի դշխոյի վրա,

երբոր բանը թագաւորին կ՚հասնի, կ՚ասեն որ թագաւորը զօրավարին դիւցական մահակով տուածին պէս՝ քար դարձրուց, և Շամիրամ զօրավարին կինը իրան թագուհի արուց: Սրա հնարքովը Նինոս Բակտրա՝ քաղաքը Հնդկաստանի մէջ առաւ, որով Շամիրամայ քաջութեան համբաւը և հանճարին շատութիւնը յայտնուեցաւ բոլոր բանակի և Ասորեստանի մէջ, որով Շամիրամ իր կերպարանափոխ զօրավարութեանը մէջ վարուեց ու Նինոս այնպէս խաբուեց, որ իր աշխարհքի իշխանութիւնը հինգ օր կնոջ ձեռքը տալով, նրանով իր կորուստը գտաւ. — բայց այս ամեն քաջութեանց գործոց մէջ Շամիրամը մեք քաջ տղամարդ կ՚ճանաչէինք և ես նրա դռան ծառայից մէկն էի, որու գործքը աստուածոց բարկութիւնը գուցէ իր վրա շարժեցին:

Բայց մարդկօրէն դատելով, երբոր մեր ալքունեաց այսօրինակ գաղտնիքը քաջն Արայի ձեռքով աշխարհք հռչակուեց, կ՚տեսնենք բնական կերպիւ աստուածոց արդարադատութիւնը Նինոսի և Շամիրամայ գործոց մէջ, վասն զի երբոր Նինոս Շամիրամայ այրը քար դարձրուց իր կնոջ հետ սիրահարուելուն պատճառաւ. Շամիրամն էլ որսալով նրա սիրտը, այնքան համոզեցաւ Նինոսի, մինչև դշխոյութեան փառքին հասաւ, և այն միջոցով այս հնարքը գտաւ, որ Նինոսի իշխանութիւնը հինգ օրի պայմանաւ առաւ, և նրա արիւնը իր մարդուն գերեզմանաքարին վրա փոխարէն թափեց ու թագաւորեց, բոլոր Հնդկաստան ոտնատակ տալով, Ասորւոց անպարտելի սրոյն Ինդոս գետը սահման դրաւ,

Այլ ես գիտելով որ Նինոսի արածը արդարութիւն էր, Շամիրամայ մարդը սպանելով, որ ամօթ մեծ համարեց իր դշխոյի հետ նորա առ և անգելը, իսկ Շամիրամայ գործքը անիրաւ հատուցումն արդարութեան դէմ, որով իր մարդու փոխարէնը այնպէս նենգ գործեց և զՆինոս սպանեց, ու իր որդիքը կոտորեց, որ իր Աթոռոյն մէկը դաւաճան չի դուրս

գայ. այսպիսի արարմանց դէմն էլ ես գլուխ վերցրի, և Նորա ժառանգը Նինուաս՝ Նորա դէմը ապստամբ հանեցի. Այս էր պատգամքը զոր աստուածք Շամիրամայ ազդեցին իր քաջագործութեանց սկիզբը, և ինձ նման մանկանացուի ձեռքովը Նորա մահը պատրաստեցին:

Թէև այս դաւը յայտնի եղաւ Շամիրամայ և զիս բանտարկեց 1) երկար ժամանակ, բայց աստուածք վճռել էին և անդառնալի էր նոցա տուած վճիռը, ուստի և զիս արձակեց բանտէն. ու ինքը մահ ընդունելով այս վարանջութեան պատերազմի մէջ 2), անմահից աշխարհքը գնաց, և մեք կ՚ պաշտենք զինքը աստուածուհի բոլոր Ասորեստանի ի տիպ աղաւնւոյ. — Ահա այս ամէն եղելութիւնքը քեզ պատմեմ, որ մեր ազգային պատմութեան հիմունքն են:

Արդէն պատմեցի քեզ թէ Արամ՝ իր քաջութեան զէնքով ի՛նչ արհաւիրք թափեց Ասորեստանի վրա. և յետ այնորիկ երբոր Նինոս զինքը դաշնաւորեց մեր միապետութեանը հետ, քանի՜ քանի արեան ճապաղիք արուց նա մեր կողմանց թշնամեաց դէմ. որոնք Բարշամին էր հսկայն և Պայապիս Քաղեայ Տիտանեան ցեղեց, որոնց դէմ պատերազմելու ժամանակ, ասացի որ՝ յաղթութիւնը սուրհանդակ կերթար Արամայ առաջին, և այս ամէն անիրաւութիւններն էին Արամայ, որի վրա, թէև մանկանացուք աչք կ՚դարձնեն, բայց աստուածք աչօք բացօք վրէժխնդիր լինելու չե՛ն յուշանալ:

Այս ամէն անիրաւութեանց փոխարէնն էր, որ Աստուածք Արամը պատժելու համար, Նորա աչքի լոյսը խլեցին, երբ որ Նա իր աշխարհաւեր աղեղը ծերութեան ձեռքով գետինն էր դրել. և այս Արամայ քաջութեան հողին էր, որ դարձել էր Արայի վրա, որով Նա իր անհամեմատ գեղեց-

1) Զրադաշտի այս բանտարկութիւնը կ՚յիշէ Ռօլլէն իր հնախօսութեան ա. հատորի 329 երեսի մէջ, զօրագլուխ Շամիրամայ կոչելով:

2) Խորենացի. գիրք ա. գլ. ժէ.

դութեամբը, որ բոլոր Բաբելոնի արանց և կանանց աչքը գողացել էր մագնիսական զօրութեամբ, այս անգամ էլ արինը աչքի տակն առաւ, աղեղն յուսը ձգեց. և իր աշխարհակալ հօր սիրոյն՝ աշխարհքիս չորս ծայրը չափել յանձն առաւ, որ նորա աչքերը բացուելուն դեղ գտնի:

Արայի գլխին թեւատարած էին աստուածքն Արմաւրայ. սրանով էր, որ Բաբելոնի մէջ Շամիրամայ պալատին խորշերին անգամ նորա ոտքին անծանօթ չէին. բայց Արամայ այս վերջի օրերէն Ասորեստանի սահմանները սարսափելով, Նիւքեարայ և Տիտանեանց ցեղովը պատած էին. որ միւսանգամ Հայկայ թոռանց աղեղունքը մեր հայրենեաց վրա չթափեն. որոնց դէմ անշիջանելի ոխ կ՚պահէին այս անհաշտ թշնամիքը. բայց Արայի համար չէին այս թշնամութիւնը. նրան Աստուածները կառաջնորդէին. և ամէն վահան նրա նետի առաջը կասեն որ կ՚խոնարհէր:

Մոգերը խորհուրդ կ՚տան Արամայ, որ իր աչքերը բացուելու բժշկաց ճարտարութիւնը չի ներգործել. այլ թէ հնար կայ, Շամիրամայ մոգական դեղը միայն կ՚օգնէ, էն էլ թէ որ կարան, իր որդիքը միայն կարող են բերել:

Զարհուրելի ճանապարհորդութիւն. ով կարէր յանձն առնել և թշնամեաց ձեռքից ազատել. աստուածք անգամ Շամիրամայ երկրի մուտքը կ՚պահէին. վասն զի ինչպէս որ ասացի, անհաշտ ատելութիւնը որ կ՚թագաւորէր մեր արքունեաց մէջ Հայոց միապետների դէմ Արամայ արիւնհեղութեանց երեսէն, Հայաստանի սահմանագլխից մինչև Բաբելոն, նահանգ առ նահանգ պահպանութեան տրուած էին Նիւքեարայ ցեղին (զոր Արամբ ի տեղ նիզակի աշտարակին վրա վարեց), հսկայից զԱրմէն՝ Բարշամայ, որու արիւնովը Կորդուաց լեռները ներկեց. և արեւմտեան կողմը Տիտանեանց քաջերին, ուր որ Արամբ չորս բիւր հետեւակ և եր-

կու հազար հինգեալ զօրքով ոտնակոխ էր տուել, և այս ամէն քաջերի սիրտը արիւնով լցրել էր ընդդէմ իր տոհմին:

Արամ ուրիշ մի հարազատ չունէր բաց ի իւր որդւոց· ուստի այս արիւնոտ ճանապարհը իւր որդիքը պիտի երթային. Արբէլ, Հարքայ և Արայ ամենէն փոքրը՝ երկուքը իրանց հօր պատերազմի մէջը բրտացած, արդէն ուժաթափ էին եղել երկար աշխարհակալութենէ. սրանց փոքրն Արայ որ իւր երիտասարդ հասակի մէջ միայն եղբարց յաղթութիւններին հանդիսատես եղած էր և անփորձ էր պատերազմական ասպարէզին, բայց անպարտելի իր հսկայութեամբը, որ ուժով իր եղբայրներէն կը գերազանցէր և դեռ իր թիկունքը գետինը չէր տուել, այն հայրական սիրոյն համար թշնամեաց նախանձը իր տոհմին դէմ ոչինչ համարեց. ուստի և Արմենակայ սօսիքը իրան օգնութիւն կանչելով, աղեղն յուսը ձգեց ու տէգը ձեռք առաւ, ճամբայ ընկաւ դէպ յԱսորեստան:

Բոլոր Արմաւիր տեսաւ որ զքաջն Հայոց աստուածք կ'առաջնորդեն. իրաւացի տրտունջներ արուց ժողովուրդը և ատոն արհամարհանք Արայի երկու եղբարցը վրա, որոնք հասակաւ և ոչ սրտով մեծ էին քան զԱրայ:

Մարդկային ամօթն էր, որով ազնուական արիւնը երկու վեհազանց երեսը կարմրացրուց. շուտով եղբօր օրինակին հետեւեցան Արբէլ և Հարքայ. մահ յանձն կ'առնունք, ասացին, և մեր դիւցազն եղբօրը մինակ ճամբայ չենք թողուլ երթայ. որ միայն ոյժ ունի և ոչ պատերազմական հմտութիւն:

Երեսուն օրուան լուսին առել էր արեւը Արամայ որդւոց դուրս գալուն, և դեռ ևս չէր ուզել հորիզոն մտնելու, ու Արամայ բանաց որդիքը միայն ձգելու. բայց Արայն, կորիւն առիւծուց Արայն մարդկային ձեռաց ոյժը անմահից զօրութեանը հետ փոխել էր, և կ'թուէր իրան թէ յաներեւութից ձեռք մի կմղէր զէնքը. արեգական վերջալուսովը բարձր և սպիտակ ամրոցը նշմարեց ի հեռուստ. եղբարցը խորհուրդ

տուաւ որ յառաջ չերթան մինչև որ ինքը գնայ ամրոցը դիտէ և յետոյ նշան տուածին պէս յետեւէն հասնեն:

Լարեց աղեղն ու յառաջ անցաւ. արեւն ի մուտս էր, ծառոց սօսափիւնը համատարած էր անտառին երեսը. երբոր ինքը լուռ անտառին ծայրը կոխել սկսաւ ու նիզակը գետինը խրեց ամրոցի դրան առաջին. և ահա մէկ օրիորդ աշխարհ-քիս Հուրիներէն աշտարակի ծայրէն Արայի սիրտը շամ-փրեց Աստղկան սիրով ու ձայն տուաւ, Մահկանացուդ, հո-ղեղէնի ոտքը դեռ այս հողը չէ կոխել, դու ի՞նչ սրտով հա-սար այս տեղ. երիտասարդ, արեւդ խնայէ ու ոտք առ փախ-չել այս տեղէն քանի որ երկգլխի վիշապը քեզ չէ յափշտա-կել, որ ահա ուսկէն յետ կը գայ:

Ո՛վ դշխոյ բարձրութեան, ասաց Արայ, ո՞վ կարէր զիս այս տեղ բերել, եթէ ոչ քու սէրդ միայն. և սիրոյ արտա-սուքը օրիորդի աչքը բռնեցին:

Ո՜հ, կխնայեմ քեզ, դարձոյց օրիորդը, եթէ չունիս աստ-ուածք քեզ հետ օգնական, չէ պիտի կարես ազատել զքեզ վիշապի ձեռքէն. ասաց, և հառաչեալ ձայնով նշմարանք տա-լով վիշապի գալուն, պահուեց օրիորդը վիշապի աչքէն:

Դարձաւ Արայ և մարդակեր գազանի աչքին երեւնալ ուզեց, և ահա որոտաց վիշապը — սար ու ձոր արձագանք տուին:

— Ի՞նչ յաջողութիւն է ինձ այսօր. ես սարերը որսի կպտտիմ, և ահա որսը իմ դուռը եկած՝ ինձ կ'սպասէ:

Ասաց վիշապը և մօտեցաւ Արայի, որ սաղ սաղ ուտելու կուզէր:

Արձանացաւ Արայ, թէ որ ասաց, իմ նետս աստուածք քու ճակատին չէ ուղղեն, ապա ուրեմն և Սօսեացն Արմէ-նակայ չեմ ես նուիրական. ասաց, և Արայի խօսքին աղեղը դարձուածք տուաւ վիշապի գլխին՝ երեքթեանի թունաւոր նետով:

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻԽԳԱԲԵՐ ՍԵՐԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ ... 1925

Սրտոտ պատանիդ, կրկնեց վիշապը արհամարհանօք շնչով, միանգամ փորձէ ձեռքիդ քաջութիւնդ:

Նա՛ ահա վերջին ճչաց օրիորդը չկրկնել Արայի գնեոն. Թէ որ անփորձ պատանին հարուածը կրկնէր, առաջի հարուածին վէրքը երկրորդովը պիտի ողջանար. ուստի պատասխան տուաւ Արայ. միանգամ ծնայ ի մօրէ:

Այն ժամանակը վիշապը իր արեան ճապաղեաց մէջը թաւալելով, յետին շունչը փչեց:

Իսկոյն Ամրոցի դուռը բացուեց, օրիորդը Արայի ոտքն ընկաւ իր ազատութեանը փոխարէն, իմ տէրս դու ես, ասաց, և զԱրայ ի ներքս առաւ:

Արայի յաղթութեան թաշկինակը այս բոպէիս կ'փողփողէր Ամրոցի ծայրից, այս էր նշան տրուած եղբարցը իրան հասնելուն:

Այսպիսի չքնաղ օրիորդի ազատարար լինել և Արայի պէս գեղեցիկ երիտասարդի սիրտը նրա հոգւոյ հետ Աստղկան սիրով չկապուել՝ անհնարին բան էր. բայց հայ դիւցազնը այսպիսի բռնաբարող կրից դէմ նոր չէր սովոր առաջինանալ. ուխտ դրաւ անձին հետ, քանի որ Ասորեստանի թագաւորին պալատը ոտք չէ կոխել այս անգամ, մարդկային օրինաց այս ոսկի լծոյ տակը խոնարհել դժուարին էր իրան: Ուստի ազատութեան խնձոյքը կատարելէն ետքը, մինչդեռ նոր կ'ծնէր արևն աշխարհաքիս երեսը, վիշապազուն օրիորդին պահպանութիւնը իր մեծ եղբօրը յանձնելով, ճանապարհ բացաւ դէպ ի վիշապի երկրորդ եղբօր բնակարանը, ուր այս տեղից մի աւուր գնալիք էր. — Նա սրանք էին Ասորեստանի մուտքին պահապանքը:

Արեգակն ի մուտս կխոնարհէր, երբոր մի յաղթութեան հանդէս և կարմիր ամրոցին տակը կատարեց Արայ, մէկ նետի հարուածով եռագլխի վիշապը սպանելով. այս տեղ և օրիորդի երկրորդ քոյրը իր միջակ եղբօրը Զալքայի տալով, ճա-

նապարհի զգուշութիւնները օրիորդէն իմացաւ, ու առաւօտուայ լուսոյ հետ ճամբայ ընկաւ:

Արևն Արայի աչքէն նոր կ'փախչէր հորիզոնի սև սև ամպերի տակ, երբոր սև վիշապին դէմ առ դէմ պատահեցաւ, և երկիւղէն աչքերը գրեթէ սևցաւ. կարծես թէ այս երկիւղը ամբողջ օրը Արայի հետ կ'ճանապարհորդէր, քանի որ իր եղբայրքը այս ճամբորդութենէն յետ կացան:

Եւ այս էր պատճառ որ եօթնագլխի վիշապի առաջին հարուածը գլորեց զԱրայ կիսով չափ հողի մէջ. բայց հայ դիւցազնին բրտացած բազուկները թուլանալ չէին գիտել աղեղ լարելուց. ոտքի վրա գալ և թունաւոր նետը վիշապի կուրծքին շեշտել մէկ արուց. ու հրաշագեղ օրիորդին ազատութեան աւետիքը տուաւ, որ նոյն կիտին ծունկի վրա եկած ամրոցի ծայրէն Արայի յաղթանակելուն օգնութիւն ի դիցն կ'մաղթէր:

Իսկ երբոր վիշապը մէկ նետի հարուածով շունչ փչեց, իսկոյն թռաւ վերէն իվար. և ամրոցի դուռը քաջ յաղթականի յառաջը բանալով, Արայի պարանոցն ընկաւ և անձը նորան հաւատաց հրաշագեղն ՙՆուարդ [1]:

Բոլոր գիշերը անգիւտ օրիորդի սիրովը վառուած, արտեւանունքներէն հալածական գնացել էր քունը. ճանապարհի նեղութիւնը երբէք միտք չէր բերել, բայց եթէ իր նոր սիրականի հետ ասել ու լսել. ՙՆոր կ' զգայր ՙՆուարդ իր ազատութեան գինը. երբոր զարմանքով կ'լսէր Արայի բերնէն իր երկու քրոջ ազատութիւն, էլ՝ այնպիսի քաջութեամբ երկու վիշապաց սատակմանը հետ, որոնց նմանը աչքով տեսաւ:

Կ'հաւատար թէ Աստուածք իր հարսնութիւնը Արայի համար պահել էին. բայց երբոր Արայի խօսքը կտրելով, իր

---

[1]) Կեն Արայի. խոր. ա. գիրք. գլ. ե:

սիրտը բաց արեց, լսեց որ ուխտադիր էր իր աստուածատուր փեսային. և քանի որ Ասորւոց միապետի պալատը չի մտել, ուր որ դեռ իրան կուղարկեն, դեռ իր փեսայութեանը նոքա պատգամ չեն տուել:

Ի ցաւս սրտի բռնուեց Նուարդ. գիտէր որ ամենամեծ դժուարութիւններ Արայի յառաջը դիզուած են, որոց միջից անցնել անհնարին էր մահկանացուի. որով Արայի սիրոյն և խանդաղատանացը չէ դիմանալով, Աստուածներին կ'մեղադրէր որ էնպէս մարդը ի մահ կառաջնորդեն. բայց որ Արայի հետ ինքը ճանապարհորդ չէր կարող լինել, իր խորհուրդը նրա հետ ուղէկից դրաւ:

Միշտալի պատմութեանէն լսած էր Նուարդ թէ իր ամրոցէն մինչև Շամիրամայ մայրաքաղաքի հորիզոնը մի օրուայ ճամբայ է. և նրանից այն դին՝ բոլոր ճամբէն նետով ու ասպարով զօրքերը բռնած Արամայ օրէն հայոց տիգաւորների երեսից, որոց դէմ արեան վրէժխնդրութիւնը ոչ միայն սըրտերի մէջ, այլև թունաւոր նետերի ծայրը կենդանի կ'պահեն Ասորւոց աղեղնաւորք, և լսելով որ իր ազատարար դիւցազն Արայ Արամայ որդին է, և հօր համար մահ աչքն առել կերթայ, աղի արտասունքով ասաց.

Ի՞նչ հնար կայ քեզ այնպիսի ճամբից անցնել՝ որի վրա գիշեր ցերեկ աղեղնաւորք կ'հսկեն, նրա անցքը Ասորեստանի քաջերն են բռնած՝ որոնք բոլոր Արամայ ցեղի արեան ծարաւիքն են, և այս զգուշութիւնը տասնապատիկ է Թագաւորի պալատին շրջապատը, ի՞նչ հնար կայ, և ոչ մի:

Բայց կարա՞ն քեզ օգնել աստուածք և քու ազնիւ արիւնդ Ասորեստանի հողի վրա չթափել. այո նրանց ձեռքին միմիայն հնարք, թէ որ քեզ անմահից հաւասար ոյժ տան ձեռաց, և կարողանաս կապել օրահոլով ժամանակի ձեռքը, որ ծերունու կերպարանքով իրիկուայ համնելուդ տեղը ճամբի մէջէն քեզ կ'պատահի՝ ուր որ հորիզոնի վրա նստած՝ դի-

շերը կ՚թողայ, ցերեկը կ՚ժողովէ՝ և ցերեկը կ՚թողայ, գիշերը կ՚ժողովէ՝ այն այն ժամանակը կարաս գիշերուայ հետ ճամբայ առնել, մինչ դեռ այս ամէն սպառազէն պահապանները մեռելի պէս քնած են, և թագաւորի պալատը բաց կ՚գտնուի քու յառաջը մինչև իր ննջարանը։

Ուշ կ՚դնէր Արայ Նուարդայ պատմութեանը ամենայն արթնութեամբ՝ երբ որ այս անոյշ ձայնը վերջացաւ, երկար գիշերը դեռ նոր կառաւօտէր, ուստի և Աստուածոց սիրելին Արայ ի սօսիս Արմենակայ ծունր կրկնելով, այնպէս բաժանուեց իր սիրահարէն, ինչպէս և սոխակը վարդից։

Քանի որ ճանապարհը կ՚ընդմիջէր Արայ, բոլոր լած-ների գաղափարը կենդանի կ՚նկարուէին յիշողութեան մէջը՝ որոց մի արդելքին դէմ հազար ու մէկ հնարքներ մտքովը կսար ու կ՚առնէր. և մտածելով թէ որպիսի ողջանոք ծե-րունու ոտքը պիտի դիմէ, ցերեկուան արևուն հետ հորիզոնը մտնելու կ՚աճապարէր։

Այս մտատանջութեամբ հասաւ ծերի մօտ այն բոպէին, երբոր նա արդէն գիշերուայ թելը նոր արձակելու կ՚պատրաս-տուէր.

— Ողջոյն քեզ Հա՛յր, ասաց Արայ, և դէմ առ դէմ կացաւ ծերունւոյն։

Իսկ ծերը և ոչ մի պատասխան տալով Արայի, սպիտակ կծիկը անընդհատ կ՚ժողովէր։

Իսկոյն Արայ առաւ կապտրճէն աղեղի թելը ու ծերի ձեռքերը կապեց. այս էր նշան տուած օրիորդը, որով Արայի պիտի յաջողէր ծերի բերնէն Աստուոց թագաւորի բոլոր պա-լատին հանգամանքը քաղել, և սիրտ անել ահեղ զինուո-րութեան մէջէց ճամբայ բանալ, երթալ ու գտնալ։

Ասա, խոժոռադէմ ասաց ծերունին, ի՞նչ է խնդիրքդ, որով մինչև այս տեղ վստահացել ես անմահեց սահմանը կո-խելու և զիս այսպէս կ՚պարտաւորես գիշերը երկարել։

Յուշ Տէր, գլուխը յերկիր խոնարհեց Արայ, այս ահեղ ճանապարհորդութիւնը Աստուածք ինձ ճակատագրել են, ուստի և այս է պատճառը ահա որ ինձ նման մահկանացուի ոյժ կտան այժմ անմահից սահմանը կոխելու, ինձ միայն ճակատագրել են որ բոլոր այս երկիրը երբեմն տիրապետողի աչքին համար գնամ դեղ բերեմ, որու որդւոց վիճակաւ և ես կրտսերն եմ. և այս դեղը դիք այնպէս պատգամ տուած են որ Շամիրամայ պալատը միայն կ՚գտնուի. բոլոր այս ճանապարհի հանգամանքը քեզնից միայն տեղեկութիւն առնելու եկած եմ:

Դժուարին չէր ծերունւոյն գուշակել թէ այս գիտութիւնը ուստի՞ պիտի գիտենար Արայի պէս նորահաս երիտասարդը, երբ որ զԱրայն կ՚տեսնէր բոլոր ճանապարհի կէս փորձութիւններէն ազատուած մինչև իւր ոտքը եկած է. վասնորոյ և դարձաւ ասաց Արայի,

— «Երբոր դու սահմանապահ վիշապների ձեռքէն ազատուել ու այս տեղ հասել ես, կայ ուրեմն քեզ հետ Աստուածոց զօրութիւնը՝ ուստի և Շամիրամայ գաղտնիքը քեզ բանալու՝ ի դիցն է վճռուած:

Այս րոպէին ի գութ շարժեցաւ ծերունին Արամայ դիւցազնին վրայ. և բովանդակ մէկ ազգի իշխանութիւնը միանձնաւորելու համար աշխարհ.քիս վրայ, որու ժառանգը Արայ միայն պիտի մնայր գեղեցիկն, ի գութ շարժեցաւ, որ Արայն թշնամեաց նետին զոհ չլինի. ուստի և այսպէս կալաւ սկիզբն խօսից, զգուշացնելով զնա յամենայն դէպս ճանապարհի:

— Դիւցա՛զնդ Արայ, Հայոց միապետութիւնը քու իշխանութեամբդ պիտի ճոխանայ, վասնորոյ և բոլոր այս գաղտնիքը քեզի բանալու, քու կեանքդ պահելու համար միայն կ՚ասեմ, ընդորում քու տոհմիդ մէջը դու նախ առաջին

աստուծոց ծուխը կ'ելնէր [1]) և այսօր Արմէնակայ Սօսիքն են մեր բնակարան՝ բնութեան այնպիսի հրաշալեաց մէջ։

«Այս տեղէն մինչև Բաբելոն տասներկու ասպարէզ ունիս չափելու. և իւրաքանչիւր ասպարէզ կ'պատեն բիւր մի աղեղնաւորաց. ամէնքն ալ կազմ և պատրաստ աղեղները լարած՝ ճանապարհի երկու կողմը կ'շարուին ոտքի վրայ քընած, նրանց զօրապետները ամէնքը մէկ մէկ ժամ արթուն կ'հսկեն։

Բաբելոնի մուտքը կ'բռնեն նիզակաւոր զօրքերը բոլորն ալ այս կարգով և այս զգուշութեան մէջ. մանկութեան յիշատակներդ միտք կբերեն քեզ, բայց հիմա քու տեսած Բաբելոնը չէ. աշխարհքիս առաջի մայրաքաղաքն է հիմա Շամիրամայ այս հրաշակերտը. քառակուսի պարսպաւոր Բաբելոնը [2]) ամէն մէկ կողմէն քսանհինգ պղնձաձոյլ դռներով պատսպարուած է. ամէն դուռը կ'պահպանեն հազար մի զօրաց. բայց այս ահագին պարիսպը շրջապատող խրամը բոլոր տարին ջրալից կը կենայ. գիշերը բոլոր մուտքերի վրայէն կամուրջը կ'բարձրանայ բաց ի միջին դռնէն որու պահապանքը գիշերը քուն չունին. անցած ժամանակդ սոցա միայն պիտի չերևիս, և այս կլինի միայն դիւթական զօրութեամբ, որ Հեսպերեան դարաստանի ծառերի մէջ կը գըտնուի, այն ծառերի տերևիցը ահա մինը քեզ կ'տամ, և այն տեղը հասնելուդ պէս՝ քաղաքամէջը ձեռքիդ բռնած կ'անցնես, որով և ոչ մէկի աչքին ալ չես երևիլ։

«Դռնէն ներս մտնելովդ, Եփրատայ պատուարի մօտէն կ'երթաս՝ որ քաղաքի հիւսիսէն թափելով քաղաքամէջէն կանցնի մինչև Շամիրամայ նոր շինած պալատը, որ կամրջի արևմտեան ծայրը ահեղ տեսիլք ցոյց կ'տայ երեք կարգ պա-

---

[1]) Արայի օրովը կ'յիշատակուի սկիզբն կռապաշտութեան Հայոց։

[2]) Բաբելոնի այս նկարագրութիւնը կառնունք Ռոլլէնի հնախօսութիւնէն։

բացով. այս տեղ պէտի ամէն քաջութիւնդ գործ դնես աներկիւղ անցնելու իւրաքանչիւր ճանապարհ, որոնք Եփրատայ աղեւսագործ գետեզերքին վրա կ'իջնեն՝ և ցերեկը բաց, գիշերը փակ են անցնողի առջև ու քաջ զինուորներու խումբով պատած:

«Պալատը մտնելէդ ետքը, այն լայն ու զրահաւորեալ հրապարակներէն անցնելուդ ժամանակը, երբոր վերնայարկերուն դռները կը հասնես, որ դռան վրա որ Շամիրամայ արձանը կտեսնես ձի նստած Թագաւորական հանդերձով, այն դուռը կ'մտնես. և իրարու վրա քառասուն սենեակ մէջէ մէջ կ'բանաս՝ վերջինին մէջ կը ննջէ Շամիրամ՝ գլխի կողմը ոսկեայ աշտանակը կ'վառուի, ոտքի տակը արծաթէ. աջ կողմը եղած գզրոցի մէջ՝ քու հօրդ աչքերը բացող դեղն է. իսկ ձախակողմին մէջ ուրիշ կուրացուցիչ դեղեր կան. և յետ այնորիկ թէ զՇամիրամ ո՞րպիսի մարդ պէտի տեսնես, այն էլ Աստուածք քու աչքերին կ'թողան տեսնելու. և անելքդ՝ քու երիտասարդ հասակին գործ»:

Ըսաց ծերունին, և Քեապերեան զարաստանի դիւթական ծառի տերևը Արայի տալով, պատուէր տուաւ որ շուտ յետ դառնայ. և յանձնեց նորան դիցն պաշտպանութեան, ինքը մնաց ի խոր քուն:

Երես բռնեց Արայ դէպ ի Բաբելոն. և կարծես թէ, դէք իրան ճանապարհորդակից կերթան, կուտակ կուտակ ամպերը հաստատութեան մէջ մէկ մէկու վրա կ'դիզուէին, հետ զհետէ ցանցառանալ սկսան և դէպ ի լեռներու գլուխը կ'երթային ժողվելու. անշուշտ դիւցազնն Արայի գիշերային մթութեան մէջ ճամբայ կ' բանային. աստեղաց շարքը երկնակամարին մէջ տեղ տեղ ամպերու պատառուածքներէն լապտերի նման Արայի առաջը կ'կախուէին. իսկ Թագուհին աստեղաց ամպերի միջէն բաց ու խուփ կ'երթար և դիցականն Արայի ճամբայ ցոյց տալու կ'խոնարհէր. Եփրատը

Հիւսիսէն խոխոջելով արծաթափայլ թաւալգլոր կ'երթար Բաբելոնի ընդարձակ դաշտին երեսը և զԱրայ ի Բաբելոն կ'առաջնորդէր. իսկ ինքը այս խորին լռութեան անհուն անապատին մէջ որ արդարև բնութեան հետ կընկերանար, բոլոր դէք յօգնութիւն կանչելով, կ'մերձենար գիշերապահ զօրաց խումբերուն. հասաւ և անցաւ պահնաւորաց կարգը. սիրտը ահուդող ընկաւ, երբ տեսաւ որ ծերի ասածին պէս երկու կողմի զօրապետքն էլ զարթուն կացած զինքը տեսան, ու մէկ մէկու նշան տուին իրան բռնելու:

Իսկոյն տերևը բերանը քաշեց ու աներևութացաւ Արայ անցնելով երկու կարգ զօրքի միջէն. զօրապետք մէկ մէկ կալան տեսան որ մարդ չկայ մէջերնին. Արայ հասկացաւ տերևի դիւթական զօրութիւնը. և գոհութիւն տալով դիցն շնորհաց, որ զինքը ծերի խնամոցը յանձնեցին. որով իր ազատութիւնը այսպէս գնեց, աճապարեց անցաւ տիգաւորաց խումբն էլ. և այսպէս կարգ ըստ կարգէ բոլոր պահնորդաց կարգերն անցնելով, մօտացաւ պարսպի խրամին, որ Եփրատայ յորդութեամբը լցուած՝ քաղաքը շրջապատելով ջրեղէն պարսպի նման կերևէր աչքին. և լուսին ու աստեղք մէջը կլողային, որոց լուսովը քաղաքի միջին դուռը հաշուելով գտաւ, որ միայն բաց կ'մնար անքուն պահապանների հսկողութեամբ. այս դժուար միջոցին էլ հնարք մտածելու կարօտութիւն չունէր, ծերի խրատները մէկ մէկ կը կրկնէր. դռնէն ներս մտաւ, բայց չմոռացաւ դիտել լապտերաց շատութիւնը, որ կ'բոլորէին դռան գլխի խիտառ խիտ աշտարակների վրա որոնք լուսնի և աստեղաց լոյսէն տասնապատիկ կը գերազանցէին. այս լուսաւոր ճանապարհէն Արայ աներևութացած կ'անցնէր. հասաւ Եփրատայ պատուարը բռնեց, որ գետի երկու կողմը աղիւսով ու քարով շինուած էին պարսպի նման. ամէն ճանապարհի հանդէպն էլ պղնձաձոյլ դռները կախուած. որ գետի միւս երեսի նմանօրինակ եզերքը

կ'հանէին. քաղաքի բնակչաց երթևեկութեանը համար այս դռներն էին, որ ցերեկը բաց, գիշերը կ'փակուէին:

Նման մէկ դուռն առաջին խումբ մի դաշնակաւորաց՝ Արայի սիրտը սարսափ կ'ձգէին, մինչև որ տասներկու երրորդ դուռն անցաւ և հասաւ կամրջի ականջը. որ քաղաքը երկու բաժին կանէր, և արևմտեան ծայրին երկնաչափ կ'բարձրանար Շամիրամայ նոր շինած ապարանքը, որ կախաղանաւոր բուրաստանն էլ իր մէջը ունելով, վաթսուն ասպարէզ շրջապատ ունէր և երեք կարգ պարսպով էր պատած մէկ մէկէ բաւական լայնութեամբ հեռի, պարսպի քարաշարքը բոլոր բովանդակ դրուագագործեալ, տեսակ տեսակ գազանաց ու կենդանեաց պատկերներ կտեսնուէին պարսպի երեսի հաւասարութեանը վրայ:

Մտաւ Արայ պալատին մէջ և այս եռակարգ պարիսպները գրեթէ հրեղէն ոտքով անցնելով, այն անհուն լայնութեանը մէջ անհամար դռներ կարգով նա կանցնէր, և ամենի ճակատը դիտելով, իրան նշան տուած արձանը տեսնելու կուզէր. մինչև որ այս սենեկաց կարգը ընդմիջեց, և ապա միջավայրի դուռը կրկին մեծութեամբ բարձր միւսերէն, Շամիրամայ անդրին ճակատի վրայ տեսաւ. որ արդարև հեծեալ ջիրիվար, առիւծին նետ կ'ձգէր ինչպէս ծերունին ասել էր. դռան սեմոց վրայ բոլոր ասորի ճարտարութեան արուեստին վսեմութիւնը կ'փայլէր, որոնք ասիական անդրիագործութեան ոգին ու կենդանութիւնը կ'ներկայացնեն մինչև հիմա էլ՝ մարմարինէ խառնուած շարքերին վրայ կերևան:

Բաց արուց դուռը և անմիջապէս ներս գնալ սկսաւ. պահապանները խոր քունի մէջ կ'խորդային. անցաւ մէջէ մէջ քառասուն սենեակ՝ և ահա դիցական Շամիրամ մեծ դահլճին մէջ ննջեալ ի քուն քաղցրութեան որ բոլոր պալատի կեդրոնն էր՝ պարսկային գորգով զարդարած վերէն ի վայր ոսկեզօծ արծաթազօծ կփայլէր՝ մահիճը ձգած էր առագաստի

մէջ և ծալ ի ծալ կախուած շերամի զառնաուխտ և զար-մանագործ վարագոյրը, ոսկապանը շրջապատ կը ծածկէր. չորս կողմը փետրալից բարձերը շարած:

Շամիրամ որ մինչև այս ժամանակ աշխարհք հռչակուած Նինոսի անյաղթ յաջորդ թագաւորը ճանաչուած էր, աշխարհքիս գեղեցկութեանց թագուհին բոլոր մահկանացուացն անծանօթ, անոյշ քուն մտած կ'սեմի թագաւորական դահաւորակին մէջ, մինչդեռ երկիւղը կ'բռնէ Արայի՝ այն քաջ յաղթականին մտանելու. և ահա կին գեղեցիկ կը-տեսնէ զՇամիրամ. խեղճն երկիւղը ապշութեան հետ կ'փոխի. ու սէրը կ'պաշարէ զԱրայ երբոր ննջարանին շրջապատը Շամիրամայ կանացի հանդերձը կ'դիտէ. այս վիթխարի հռչակուած հսկայի այրական դիմակը մէկ կողմը դրած, կեղծամը գլխէցը ընկած. իսկ փետրազգուն գարգմանակը հնդկական սուրերով պատին երեսը շարած, զրահը ու պողովատիկ սոնապանը իբրև ուրուական մարդոյ նետի ու աղեղանց հետ միւս կողմը բռնած. և արդարև սէր կատարեալ, զոր Արայեկ ի հոգին բորբոքեց Արայի առ աստուածուհին Շամիրամ այնպէս մերկանդամ ի մէջ անկողնի, Արայի երեսը շառագունեց. և ահեղ թագաւորի վրա այս փոփոխութիւնը տեսնելով, մազերը քստմնեց. բայց ի՞նչ հնար կայ, որ այսպէս նեղ բոպէի մէջ՝ այսպէս էլ ահեղ տեսարան մահկանացուի աչքը չէ՛ շլացուցանէ:

Ահահար դողահար սիրտ առաջ Արայ, և իր երիտասարդութիւնը փորձելու մօտ գնաց Շամիրամայ. այնպէս կ'թուէր թէ այն չքնաղ օրիորդը խորին երազների մէջ խրուած, ոգեխաբ ուրուականներով իր երևակայութիւնը շրջապատած է, որ ցոյց կտար նրա ճակատի մարգարտահատ քրտինքը. Արայ իր կարօտը առնելու այսպիսի աստուածական դշխոյից՝ քանի մի ժամեր պէտք էր. բայց իր այսչափ յուշանալը թագուհւոյ պալատին մէջ, գիշերապահ խումբերի

երկիւղը բոլոր անցուդարձի վրա, և ծերի կրկին կրկին պատուէրը, մանաւանդ քանի և չորս ժամ միանգամայն գիշերելը՝ սիրտը դող կ՚ձգէին րոպէ մի յառաջ այս ահաւոր տեսարանէն ազատուելու:

— Սօսիք Արմենակյ, ասաց մերուժը, ձեզ եմ օգնական կանչում, ասաց, և քաջութեամբ Շամիրամայ մատնիքը հանեց, իրանը տեղը դրաւ նշանի համար. երկու գլոցէն առանձին առանձին դեղեր առաւ. լուսափառ աշտանակները վերուվայր փոխելով, Սօսիք Արմենակյ, կանչեց և յետին բարեւտալով Շամիրամայ սրտին և հոգւոյն, կայծակի արագութեամբ դուրս թռաւ:

Այսպիսի անակնկալ դէմքի պատահած ուրախութիւնը ճանապարհի երկիւղը խաղաղ քարացրել էին Արայի սրտի մէջ. ամենեին էլ չէին ազդում իր զգայութեանց վրա այս տեսքէին երկիւղը, քանի որ այս անակնկալ ուրախութիւնը իր հոգւոյ մէջը թագաւորեց, բոլոր զօրաց կարգերը կ՚անցնէր և կը կարծէր թէ ծառաշատ անտառների մէջից կ՚երթայ, որոնք միայն բարակ զեփիւռներէն կը խշխշան. Նոր ուրեմն ծերի խօսքերին մեկնութեան կ՚տար թէ զՇամիրամ ո՞րպիսի մարդ պիտի տեսնէր. թէ այս էր տեսնելիքը, որ աստուած իր աչքերին պահել էին. և թէ իր երիտասարդութեան անելու գործը այս էր, որ իր մատանիքը շամիրամայ իբրև իր նշանածի հետ փոխեց. և իր հրաժարական համբոյրը նրա վարդերես դիմացը տուաւ [1]). տասներկու ժամ ճամբէն երկու ժամի մէջը գրեթէ աստուածօրէն անցաւ և բոլոր երկարութիւնը այս մեկնութեամբը կարճացրուց:

Դեռ ևս երկու ժամ միջոց ունէր ծերին հանելու, որ

---

[1]) Ընթերցողք չի համարին թէ այս գործողութիւնը Շամիրամայ ողջախոհութեանը դէմ ընծայուած է իրան. այլ նրա պարական քաջութիւնը ժամանակին յայտնի լինելու համար:

գիշերուայ լռութեան մէջ քար ու հող լուր տուին Արայի գալուն. վեր թռաւ գաղտնեաց Աստուածուհին, տեսաւ որ երկու օր վրայէ վրա անցել է ու արևը յակամայից կը գիշերէ:

— Ա՛յ դիւցազնդ, ասաց Արայի, ի՞նչ էր այսքան յուշանալդ, հիմա աշխարհք իրարով կ'անցնի՝ ասաց, և իսկոյն Արայ ծերի ձեռքերը արձակեց. — գիշերը մերկացաւ և արեգակը միջօրէից աշխարհք լուսաւորեց:

Լսեց Արայի բոլոր քաջութեան անցքը ծերունին. պատուէր տուաւ որ մէկ ժամ յառաջ Ասորեստանի սահմանէն հեռանայ. — Եւ ահա աստուածուհին գաղտնեաց ծերունու դիմակը երեսէն յետ առնելով, լուսեղէն մատվինը Արայի աչքի լոյսը խլեց, ու կ'վերանայր երկինքը. արևի միջօրէական ճառագայթն էլ չորս կողմէն տեգ արձակելով, մահկանացուի աչքէն հրեշտակ կ'ձևացնէին աստուածուհին յօդը հանելու:

Ընկաւ երեսի վրա Արայ, և Սօսեացն Արմենակայ ծունր կրկնեց արտասուաց կաթիլքով. — «Արշալոյսի սիրեցիք, ո՜վ դիք Նախամեկալք, հայաստանեայց դիւցազնս Արայ՝ դուք որ իմ հետ եղած էք ամէն փորձութեան ճամբի մէջ, ես զձեզ իմ սրտի մէջը պիտի պահեմ ի կեանս և ի մահ. և ո՛չ միայն ես, այլև իմ հայաստանը բոլոր պիտի խոստովանի ձեր երախտեքը անփոխարինելի իրանց աշխարհքի միապետական ժառանգի վրա՝ որով այսպէս սրի ու թրի մէջէց անցուցիք զիս այսօր: — Չպիտի ես ծունր կրկնեմ լուսնի և արևու քանթէ ձեզ միայն 1), որ իմ անցեալ կեանքը մինչև հիմա աշխարհքիս փորձութիւններէն անվտանգ պահեցիք. որոնք ճակատագրով ինձ համար պատրաստել էին. ուստի քեզանից միայն կ'խընդրեմ, գաղտնեաց աստուածուհիդ, որ իմ ազգիս կենաց վիճակի համարն էլ ինձ տաս, որու այժմ առաջին քայլը ահա

1) Արայի ժամանակը Հայք միայն տարրապաշտք էին:

Ասորւոց սահմանագլխից իմ հայրենի պետութեան հողը կոխեմ:

Այն ժամանակը պատգամ տուող աստուածուհին երկնագաւառի միջից, և ամպերի արձագանքը Արայի ականջին հաղորդեցին, որ ծերունու դիմակը իրան շատ պիտի պէտքը գայ գալիք վտանգաւոր դէպքերի մէջ, որ իր յառաջը պիտի գան:

Լսեց Արայ, առաւ դիմակն ու անձապարեց դէպ իր նշանադրած օրիորդի ապարանքը, ուր գտաւ նրան իր ողջամբ վերադարձի համար դեռ յաղօթս ծունկի վրայ առ դիւն բազկատարած:

Աչք դարձոյց Նուարդ երբոր Արայի ողջունի ձայնը ականջն ընկաւ. և համարեց թէ աստուածք այն րոպէին իր աղօթքի հետ երկնքէն իջուցին զԱրայ իր ազատարարը:

Իսկոյն Արայի ձեռն ընկաւ. և իր սիրոյ արտասուքը նրա ճակատի քրտնքի հետ խառնեց. ու իր միայնութեան խորանը նորադարձ փեսայի համար առագաստ պատրաստեց:

Առաւօտեայ լուսոյ հետ ճանապարհ ելան. Արայ բոլոր իր գլխի եկածը բաբելոնի մէջ իր միակ սիրելւոյն կ'պատմէր, բայց ի՞նչ տեսիլք որ աստուածք իրան ցոյց տուին Շամիրամայ վրայ, և այն նշանն էլ, որով Շամիրամայ սիրտը իր յետ պիտի կապուէր, պատմելու զգուշացաւ և օրիորդին պահեց:

Զքնաղն Նուարդ դիցական պարգևն էր Արայի. վասն այսորիկ և նրա երկու քոյրը ոչ զլացաւ Արայ իր երկու եղբարցը տալու նոյնպէս դիցական պարգև. երբոր հասաւ այսպէս նորանց պալատն էլ, բոլորը ժողովեց մէկ տեղ ու կայքով ու գանձով իր հօր երկիրը դարձաւ:

Այս արդարութեան ճամբէն բռնելու՝ դից հետ ուխտ դրել էր Արայ երբոր եղբարքը իր հետ ճանապարհ գալու յանձն առան. բայց կա՞յ երբէք աշխարհքիս վրայ արդար իրա-

ունք որ ամէն գործի մէջ էլ արժանապէս վարձ կտրեն և փառաւոր յաղթութիւնների ու մարդկային ձեռքի անհամեմատ զօրութեան հաւասար արժէքը ճանաչեն. արդարև միշտ սրա հակառակը կ'տեսնուի մարդկային գործոց մէջ. երբոր դիցն հաւասար մարդոց անմահական պարծանաց գործքերին արժանաւոր գին պիտի կտրեն, նոյն գործքերի փառքն ու դիցական քաջութեանց համբաւը մարդուս սիրտը նախանձու կ'լցնեն. իր չ'արածը ու չ'կարեցածը սիրտը չի տանիլ որ ուրիշն անի. ուստի և իր չունեցածը ուրիշին չի կամենալ։ — Անխտիր է այս աշխարհակործան կիրքը ամէն մարդու սրտի մէջ՝ որով չէ թէ հակառակորդը իր ախոյեանին, կամ ընկերը ընկերին, այլև եղբայրը եղբօր վրա հակառակ բաղդի մէջ կ'բռնացնեն. և կարելի է թէ բնութեան մէջ այսպէս անօրինեցին դէք. որ աշխարհքիս նախաստեղծից որդիքը իրարու դէմ գործ դրին նախանձը. և նրանցից սկիզբն եղաւ հայրը որդուց, եղբայրը եղբօրից, հարսը կեսրեց և կեսուրը հարսնից բաժանուելու։

Արայի եղբարցն էլ թէ որ ուրիշ բան չլինէր, այս ընկզընական նախանձը միայն բաւական էր եղբայրը եղբօրից քակելու. ուր թէ Արայի նոր վաստակած յաղթութեան անզուգ փառքերը ցերեկուան արևի շողքերէն աւելի նրանց սիրտը կ'ծակէին. մէկ կողմէն որ իրանք վիշապների հետ պատերազմելուն ամենևին մասնակից չէ եղած, Արայ իր անդարձ աղեղան շնորհիւը նրանց գանձը իրանց պարգև հանեց և Հիմէնի կապով օրիորդաց յետ'սիրտ սրտի կապեց. մէկ կողմէն էլ, որ Արայ միայն ճանապարհորդեց քաջաց երկիրը և քաջութեամբ դարձաւ. և որ ամէնէն մեծն է, իրանց հօր աչքերի համար դեղը Արայ միայն կարաց բաբելոնի միապետի ապարանից հանել ու բերել. որու քաջութեան անունովը միայն այն ժամանակի աշխարհքը կարսէր. հայաստանը որ վաղուց նրա յաղթական ձեռքին հնազանդելու միտք դրած

էր․ այս ամէնը կ'մտածէին և իրանց պարանոցը իբրև ծառայ Արայի հրամանին կ'ծռէին․ բայց այս խոնարհութիւնը մարմնով կտային Արայի, մտքերնին անխոնարհելի էր․ հազար ու բիւր չարիք կ'մտածէին իրանց յաղթական եղբօրը վրա․ — Չարութիւնն էլ որ հեշտ գլուխ կերթայ։

Օրը կ'ընդմիջէր․ Արայի յաղթական կարաւանը արևի տօթագին խստութենէն թառամած թալկացած թէև հրեղէն ձիերի վրա, բայց անջուր անապատի ընդարձակութեանը մէջ հեթեթալով կերթային․ ձիանոց ամէն մէկ փնչոցն էլ չոր հողը օրիորդների երեսին ու մազերի վրա կ'տար․ լեզուները չորացած թարշամած ծաղկի նման դեռ կանացի տկար բնութեանը կ'յաղթէին․ — Այս դրութեան մէջ հազիւ թէ կ'հնչէին մինչև որ հասան անապատի կեդրոնը․ ուր որ ազգաց կարաւանները հանգիստ առնելու համար՝ հին ժամանակից յիշատակ թողել էին հազարամեան ուռի ծառի մի տակ՝ անյատակ ջրհորը, ինչպէս թէ պարզ երկնքի հաստատութեան միջին մի կոր ամպ արևի սուր ճառագայթները կոտրի։

Միջագետքի հորիզոնական լեռները հազիւ թէ հայաստանի կողմից երկնքի կապոյտ երեսին մէջ իրանց գագաթները մազի պէս ցոյց կ'տային հայոց երկրի նոր թագուհիներուն․ բայց երկնքից թափող հրոյ նման արևի շանթերը աչքներիցը կ'խլէին․ այսքան հեռաւորութեան մէջ ճանապարհորդի համար այս յաւիտենական ջրհորը միայն կար նրանց ծարաւը զովացնելու հսկայից աշխարհքէն մնացած․ երբոր նրանք ջրհեղեղի երեսէն Արարից այս անապատի միջէն Սենաար փախչելու ժամանակը յիշատակ չինեցին, Տիգրիս հորիզոնական լեռներու մէջէն կանցնէր․ Եփրատը որ Ասորիքը կ'ընդմիջէր․ իսկ հայոց դիւցազունքը մինչև իրանց աշխարհքի զովարար օդը ծծելու, կամ այս երկնային ջրերովը անմահանալու՝ դեռ տասներկու ժամ ճամբայ ունէին․ ուստի ծառի

տակը իրանց տեղի իշխանի ընտրեցին. նաժիշտները ու ծառայք հնդկացի գործերով խոնջացած աստուածուհիներուն համար նստարան յարդարեցին:

Արքայորդիք իրանց բոլոր մտածմունքը թողին ու նազանեաց ծարաւը զովացնելու փութացան դէպ ի Ջրհորը. բայց անհնարին խորութենէն մէջը նայողին սարսափ կ'բռնէ. Արայն գեղեցիկ մեծ եղբօրը կառաջարկէ հորը իջնելու. բայց Արբէլ, ամօթ տղամարդութեան, կնիկ մարդու էլ սիրտ չունելով, անփորձ տղայի պէս եղբօր խնդիրը կմերժէ. և այս կանացի երկիւղը դաս կլինի միջակ եղբօրն էլ. ուստի Արայ ինքն իրան վճռակ կընտրի այս բարերարութիւնն էլ իր եղբարցը անելու ի սէր դստերացն գեղեցկութեան:

Արտասուք կ'թափեն օրիորդք. իրանց կենացը մահ կուզեն, Արայի վտանգ բերել չեն ուզել այսպիսի վտանգաւոր տեղ. բայց աստուածոց վճիռը տրուած էր միւսանգամ Արայ փորձութեանց մէջ ընկնելու, որ փառաւորութիւնն էլ աշխարհահռչակ լինի: Արայի երախտիքը եղբարց վրա՝ անկասկած կ'անէին իր սիրտը նրանցից ապերախտութիւն տեսնելու. ուստի և ճշմարիտ երախտիք ճանաչողների լացին չնայելով, չուանը մէջքը կապեց ու անդնդային Ջրհորը մտաւ. ամէնքն էլ անմահական ջրովը զովացան. բայց Արայ Ջրհորի մէջից չհանելու չար խորհուրդը եղբարքը յղացան. մինչդեռ օրիորդք ճամբայ ընկան, եղբարքը Արայ հանելու ժամանակը՝ չուանը կտրել էին ու թողել գնացել. օրիորդներին հաւատացրին որ Արայ քաջքերի հետ ծեծի բռնուեց, որ մեր յետևից կը գային. բայց Նուարդայ պատուէր էր տուել Արայ որ եթէ իրան մի փորձութիւն հասնի եղբարց ձեռքովը ու իրան հորէն չի հանեն, ինքը բանը լոյս չի ձգի, մինչև որ Արայն Արմաւրայ մէջը չի տեսնի:

Համբաւ հասաւ Արամայ թէ իր որդիքը կդառնան յաղթութեամբ ու իր աչքերը ողջացնելու դեղը կ'բերեն. ու-

բախութեան աղաղակներով բոլոր քաղաքացիք կ՚ընդառաջէին հայոց դիւցազունքներին. և թագաւորական կառքերը կ՚ընդունէին նրանց. գիշերը բոլոր Արմաւիր լուսով կ՚վառուէր ի նշան ընդունելութեան միապետական ժառանգներին. Արամայ խուռն բազմութիւն աչքի լոյս կերթային նախարարք և Ազնուականք. ամէնքն էլ ապշութեամբ կ՚լսէին երկու եղբարց բերնէն վիշապների հետ արած քաջութիւնը. զոր իրանց վրա կ՚պատմէին. իսկ Արայ կ՚համբուէին քաջքերի [1]) ձեռքը մեռած. բայց այս ամէն համբաւները կասկածելի եղան Արամայ արքունեաց մէջը, երբոր կուրացուցիչ գեղերը Արամայ աչքը բանալու ի գործ դրին ու կրկին պատճառ եղան նրա տասնապատիկ ցաւերին. որով և առանց տեսնելու իրանց հօր երեսը՝ մերժուեցան երկուքն էլ հայրական սիրոյ և շնորհաց պատուէն:

Նուարդ որ երկու քոյրերէն գեղեցիկն էր և Արայի դիւցազնական քաջութիւններուն արժանաւոր փոխարէն ու նրա սիրոյ և հոգւոյն ընդունակն, արքունեաց մէջը միայն մնաց առանց Արամայ գաղտնիքը ի վեր հանելու, ինչպէս պատուէր առած էր նրանից. զոր բոլոր պալատականք այրի հարսն կ՚ճանաչէին Արայի. նրա յիշատակը պատուելու համար՝ օրիորդին այս շնորհը եղաւ արքունեաց մէջը մնալու. — Նուարդ աստուածոց երկայնմտութեան վրա համբերութեամբ կտանէր. միշտ փորձուած է որ մարդկային գործոց մէջ արդարութիւնը որ ամէն առաքինութեանց մեծ ու առաջինն է, ստութենէ կ՚յաղթուի, և մեր աչքին կ՚երևի թէ միշտ արդարութիւնը ստութեան յառաջը հալածական կերթայ և նրա խաւարի տակը կ՚ծածկուի. իսկ արդարութիւն գործող անձինքը կը համարինք թէ իրանց յիշատակներովը մէկ տեղ կ՚անհետանան: Բայց մահկանացուաց կենաց կարճ ընթաց-

---

[1]) Խոր. ի. գիրք. գլ. կա:

քին մէջը այսպէս մշանջենաւոր կերևայ, այլ դէմն երկայն-մտութեան տուաջին՝ մարդոց արդարութեան և ուղղութեան հակառակ գործքերը վայրկեան մի եւս ստութեամբ գահէն վրա չեն թագաւորել, այլ շուտով գիշերուան խաւարին պէս կ'ցնդին. և գործոց արդարութիւնը արևու լուսէն աւելի կ'փայլէ՝ կիտուկ կիտուկ ամպերը երբոր արեգական երեսը կ'բռնեն ու խաւարութեան ստուերներով իրանց տևու-թեան մուրը երկրիս վրա կ'թափեն, կրկին բարութեան մեզ պատճառ կլլեին. և արևու աւելի պայծառութիւնը կ'գու-շակեն:

Ո՞վ որ անիրաւութեամբ ուրիշի արդարութեան յիշա-տակը կը կորի, կամ երախտեաց դէմ վատութիւն անելու է կ'անիրաւէ, ինքն էլ արդարութեամբ իր վատութեան փոխարէն հատուցում կ'գտնի:

Երբոր Արայի երկու եղբարքը նրա երախտեաց դէմ ապե-րախտ գտնուելով, կամ թէ անիրաւութեամբ Արայի բարի գործոց յիշատակը և մեծամեծ յաղթութեանց համբաւը յափշտակել կուզէին, թէ որ ուղերը ողջացուցիչ եւս լի-նէին, ստուածք չէին յուշացնել նրանց արած ապերախ-տութեան հատուցումը իրաւամբք նրանց գլխին թափել. և արդարև աստուածոց արդարադատութենէն աւելի կ'հաւա-տանք Արայի երկու եղբարց Արամայ աչքից ընկնիլը, քան թէ դեղոց վնասակարութենէն:

Այս ամէն անցքերից յետոյ թէ ի՞նչ քաղաքական անց-քեր եղան, և Արայի քաջութեան գործքերը ու իր Շամի-րամայ յայտնուելը՝ թէ ի՞նչպէս աշխարհ.ք հռչակուեց, այս գիշեր քեզ բոլորը կ'պատմեմ:

## Ն.

### Շամիրամայ օրհնութիւնը Հայաստանի վրայ. և Արայի յայտնուելը:

Զրադաշտի պալատին գոյն գգոյն ապակիով զարդարուած պատուհաններէն արևի վերջալոյսը իր շողշողուն ճաճանչները սուր տէգի նման ներս կ'թափանցէր, երբոր հորիզոնը դիզուած կարմիր ամպերի մէջէն կ'փախչէր: Այս ժամանակն էր աչա, որ Նինուասայ պալատական զօրքը պատուոյ երես բռնած կամրջի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը շարուեցան պատերազմի կարգով. Թագաւորի պալատը, կախաղանաւոր բուրաստանը և Բէլայ մեհեանը բոլոր շրջապատած՝ Թմբուկի ձայներով Թագաւորը ընդունելու կ'դիմաւորէր որ զօսանքէն կդառնայր. կամրջի երկու ասպարէզ երկարութիւնը հանդիսաւորաց կառքերը ծածկել էին. որոնց ըղձից ձգտումը թէ ի տես Թագաւորին, և թէ առ ի սէր դիցն պաշտաման՝ կ'մղէր զիրենք, ուր պիտի գտնուէին բոլոր ժողովուրդք մեծ ու պզտիկ. ինչպէս նրանց օրէնքն է.— Մեհեանը շրջապատ կանթեղներով գոյն գգոյն լուսաւորութեանց, ինչպէս կապոյտ երկինքը գիշերուայ աստղերի մէջ՝ և ի պաշտօն կրօնից բոլոր Բաբելոնը կ'հրաւիրէր:

Զրադաշտի ծառայքը եկան շարքէ շարք առաջին կացան. խօսքը ընդմիջել էր արդէն. հրաման տուաւ որ մեծ խնջոյք պատրաստեն այն գիշեր ի պատիւ Անուշաւանայ. և իր պալատին մէջը նրա համար գահաւորակ հանգստեան այն գիշեր. իսկ ինքը այնպէս սկսաւ վերստին իր խօսքը:

«Արամայ աչքերի կրկին կուրութիւնը մէկ կողմէն, երկու որդւոց հօր երեսէն ընկնիլը և որ ամենից մեծն է, Արայի քաջերին ձեռքը ընկնելու համբաւը միւս կողմէն՝ բաւական

չէին Արամայ ձախ գնդապետը սեւով սուգ նստացնելու Ար-
մաւրայ հետ մէկ տեղ. յանկարծ բոլոր Հայաստանի երեսն էլ սեւ ամպը պատեց. բովանդակ ժողովրդոց մեծի ու պզտկի սրտին վրայ երկիւղ ու սարսափը թագաւորեց, երբոր լսեցին թէ Շամիրամ մեծ զօրքով Հայաստանը բռնեց:

Ի՞նչ խռովութիւն էր այնոր Բաբելոնի մէջ. բոլոր քաղաքը տակն ու վրայ եղաւ, երբոր զօրքը ժողվելու հրաման տուաւ Շամիրամ ու Հայաստանի վրայ գնալու. ամենեւին պատերազմի ձայն կամ մէկ խռովութեան նշան չկար վաղուց Արամայ կողմէն մեր թագաւորութեան հետ, թէեւ նրա հետ միշտ թշնամի էինք:

Ժողովուրդը պատճառը չգիտնալով, խռովութիւն կ՚հանէր զօրք տալու. Արամայ վրայ յաղթանակելու՝ հակառակ ազդեցութիւն կ՚լինէր նախարարաց վրայ. չլինի՞ թէ այն ծերացած առիւծը մեր բանակը ջարդէ. պատրաստական զօրքը անհանդարտութեան մէջ էր, երբոր թագաւորէն պատգամ եկաւ թէ թշնամու ոտքը մինչեւ իր պալատը կոխել է, եւ գիշերապահ զօրքերն անգամ բան զգացած չէին. միայն իր գալուն ապացոյց եւ այրական վստահութիւնը այնպիսի զգալի նշաններ թողած է իր ննջարանին մէջ, որ թագաւորը խորհուրդ կ՚պահէ մինչեւ որ այնպիսի քաջ մահկանացուն ձեռք ձգի. եւ այս քաջութիւն ու վստահութիւնը միմիայն Արային կարծիք կտանէր, որի վրայ սիրով վառուած է եղել եւ գիտէր որ աստուածոց սիրելին միայն Արայն է գեղեցիկն, որի թոյլ տուել էին հայաստանէն մինչեւ Ասորեստանի մայրաքաղաքը ճանապարհորդել, որու մուտքը իր սահմանագլխէն սկսած՝ զօրաց կարգերով պատած էր, եւ շատ ժամանակից էր, որ այս երկու տէրութեանց իրարու հետ յարաբերութիւնը կտրած էր:

Այս պատրաստութեան հետ զանազան ձայներ էլ դուրս ելաւ. շատերը կասէին թէ քառասուն օր վրայ գիշեր էր եղել.

և այն ժամանակը Արամայ քաջին լրտեսները եկել են բաբելոն. մտել են Շամիրամայ պալատը, և նրա արքունիքը կողոպտել են. շատերին էլ կտրէին, այնպէս քաջ մարդիկ, որ Շամիրամայ պալատը մտել, ու շատ թանկագին բաներ տարել, բայց իր կենացը խնայելով, չէին մեղանչել որ Շամիրամայ պէս քաջը սպանեն. կամ թէ տղամարդութեան դէմ համարել են թշնամին անկողնի մէջ սպանելը. այլ այնպէս բան տարել են թագաւորի անձնականէն, որ եթէ պատերազմը չէ բանայ Արամայ վրա, որ արդէն կուրացած էր, իր թագաւորութեանը և անուանը շատ ամօթ կ'բերէ:

Այքան ձայների մէկին էլ հաւանութիւն չտալով, ոչ մէկը կ'ընդունէր, և ոչ միւսը կ'մերժէր Շամիրամ. այլ ինքը արտաքուստ ուրախ կ'ձևանար, մէկ էլ կարծիք կ'անէինք, որ պատերազմի իրեանց մէկ յարձակում է թշնամու երկիրը:

Բայց որպէս և ինչ, թագաւորի հրամանը սաստիկ էր. քառասուն գիշերը լուսանալուն՝ բոլոր բանակը պատրաստ էր բաբելոնի մէջ. հետևեալ օրը թագաւորի առաջնորդութեամբը ճամբայ ելանք:

Մինչև մեր անապատը դուրս գնալը 1) թշնամութեան նշաններ և ոչ մի տեղ էլ չէ տեսանք. բայց նրանից վեր Եփրատայ վրա, որ աւելի Ասորեստանի սահմանագլխի մօտ է, մեր պահապան վիշապաց ամրոցները բոլոր աւերակ ու դատարկ գտանք. իրանք էլ թշնամու նետերովը ընկած. թագաւորը միայն զարմանք ցոյց կ'տար այս անցքի վրա. բայց բանակը վրէժխնդրութեան ոգւով կ'վառուէր. և իրանց յանկարծ յարձակման պատճառը այս թշնամութիւնները կըդնէին, որ թշնամու ոտքը թողել էր մեր սահմանագլխի վրա:

---

1) Սենաարի դաշտը, ուր էր Բաբելոն:

Այս նուանդով մտանք Հայաստան և քանի որ Թագաւորանիստ քաղաքին կ՚մօտենայինք. այնքան էլ երկրի պահապան զօրքերը դէպ ի մայրաքաղաքը կ՚ժողովէին. իսկ բնակիչները մեր զօրքերի երեսից փախստական երթալով, լեռներու ու ձորերի մէջ կ՚ամրանային:

Մենք գիտէինք թէ Արմաւրայ դաշտը մտածին պէս, պատերազմը պիտի սկսենք. բայց Արմաւրայ ջուրը [2]) երբոր բոլոր բանակով անցանք Ազատ լեռան [3]) տակէն, որ տեղից որ Արմաւիրը արևմուտքէն կ՚երևէր, հրաման արուց Շամիրամ որ դաշտի արևելեան կողմը ջրաշատ լեռների շրջապատումը բանակ դնենք. որոնք բոլոր դաշտը չորս կողմից կ՚պատեն:

Թէ որ ուրիշ թշնամութեան առիթ տուած չլինէր Արամ, այս գեղեցիկ աշխարհքի սէրը միայն բաւական էր մեր բանակին նրա հետ պատերազմելու և նրա ձեռքից հանելու. Շամիրամայ ցանկութիւն էլ այս է եղել, որ Հայաստանի պէս անզուգական երկիրը իրան ամարանոց շինէ. և տարուայ երեք եղանակը այս հովասուն և ջրաշատ լեռների ու աղբիւրների վրա կեանք անցնի:

Դեռ Արամայ կողմէն դեսպան չէր եկած մեզի, մէկ էլ Շամիրամ ինքը սպառնալից պատգամով Արամայ դեսպաններ ղրկեց, կուզեմ, ասեց, այն քաջ մարդը որ քու կողմից իմ երկիրը լրտես գալով, իմ պալատս է մտել. կամ պիտի տաս, կամ կռիւ դուրս գաս, ասաց, ու ճանապարհ դրաւ դեսպանները:

Իսկ ինքը Շամիրամ իր վրանի մէջը քաշուելով, հրաման արուց նախարարաց որ զօրացը հանգիստ տան մինչև դեսպանաց վերադարձը:

---

[2]) Երասխ գետ. որու անունը այն ժամանակ Արմաւրայ ջուր կը կոչուէր — տառաբակօրէն:

[3]) Մասիս, որ դեռ Արամայիսայ անունովը անծանօթ էր աշխարհի:

Մրանը մտածին պէս՝ կարծես թէ սրտի բարկութիւն էլ նուաղեց. վրայի զէնքը յետ գնելով, աչքերի հայեցուածքը քաղցրացրուց. մնաց անշարժ նստած. մէկ անսովոր զարմանքի մէջ ընկաւ, որ խռոված ու տրտում կ'երեւէր. աչքերը խորանի մէջէն գետափնների ճանապարհին անկած կ'նայէր որքան տեղ որ տեսնելու կարող էր. մինչեւ որ նրանք հորիզոնի մէջը ծածկուեցին. հազար ու մէկ խորհուրդներ սրտի մէջը կ'զառնային. այն մարդու կերպարանքը կարծես թէ աչքին կ'երեւէր, որ գիշերուան քնի մէջ իր պալատը մտել էր. այս շփոթութեան մէջ տեսակ տեսակ մտածմունքին էլ ձեռքը կանէր վրան կ'նայէր, մէկ էլ աչքերի խոժոռ հայեցուածքէն անմիլի պէս տրտմութիւնը կ'փարատէր:

Շատ չէ անցաւ այս շփոթութեանս վրայ. տանուն կանչեց Շահիրամ իր խորանի յառաջը, ու բոլոր նախարարաց այս պատուէրը տուաւ. «Արեւտանի թագաւորութիւնը պանծացնողը ինձ հետ Հնդկաստանի մէջ՝ աստուածոց յառաջը կ'խոստովանիմ որ դուք եղաք. որքան քաջութիւն եւ աշխարհակալութիւն որ արի ես, ձեր հմուտ խելքովն էր. իմ անունը որ բոլոր արեւելք տարսեց՝ բոլոր իմ զօրաց գործակցութեամբն էր եւ իմ քաջ նախարարաց յաղթանակերովը, ուստի այն ամէն աշխարհաց մէջ, ուր որ իմ անունս կ'ստաւածանայ, բոլոր ձեր հաւատարիմ գործովն ու բաղկի քաջութեամբն էր. թէ որ յաւիտենական փառք կայ Արեւտանի գահը անմահացնող, այս պարծանքը միայն է, ուստի բոլոր Հնդկաստան Ինդոս գետէն այս տեղը՝ մեր պարծանքները վայելելու համար միայն կ'տիրապետենք. բայց Հայաստանը տիրապետելու՝ սրան հակառակ իղձը զմեզ կստիպէ. Հնդկաստանի կէս մասին տիրեցինք, մեր աշխարհակալութիւնը եւ մեր թագաւորական փառքերը ընդարձակելու. Հայաստանի կ'տիրենք՝ նոյն մեր փառքերը վայելելու եւ անմահից հաւասար կեանք անցնելու, ուր որ դիք յաւերժացած են, եւ մարդկային սերունդը այս տեղէց աշխարհք սփռեցին:

«Այն ձիրքերը որոնք մարդիկ աշխատութեամբ ձեռք կ'բերեն, բնութեան տուածին երբեք չեն հաւասարիլ. բնութիւնը բոլոր իր անզուգական ձիրքերով Հայաստանը զարդարած է. և այս անկողոպտելի հարստութիւնը Հայկայ և իր որդւոց սեպհականութիւնն է. ուր որ այսօր մենք բոլոր մեր բանակովը ոտք ենք կոխել»:

«Ի՞նչ անզուգական բարիք կ'մատակարարէ այս աշխարհքը իր աշխատասէր ժողովրդոց. թէ որ մեր պատերազմին փոխարէն առնունք, Ասորեստանի թագաւորութեան մշանջենաւոր հարստութեան մէկ աղբիւրը կը լինի»:

«Ի՞նչ գեղեցկութիւն կուտէ մեզի ահա Արամայիսի ձիւնագլուխ սարը, որ ամպերի մէջ կը գտուանայ. Նորա կողերէն կ'իջնեն բացուկ դաշտը շրջապատող լեռներ, ծաղկահոտ ու աղբերահոս ջրվէժներով. Արմաւիրը ահա այս շուշանաբեր հովիտների մէջ, կանաչազեղ զուարթածաղիկ դաշտերեսը թագուհւոյ պէս իր գլուխը կ'բարձրացնէ, եղեմաբուրելի արծաթափայլ գետերի վրա. որ քաղցրաշունչ և առողջարար օդոց ընչելովը՝ արգաւանդաւոր և պտղաձոխ պարտիզաց ծաղիկների հետ կ'ծիծաղի. որու մէջի ժողովուրդը թէ որ անմահ չլինին, բայց անմահական կեանք կանցնեն. ուստի աւելի այս ըղձով Հայաստանը ձեռք կ'բերենք թէ որ պատերազմենք նորա գտող միապետի հետ. բայց իմ պատուէրը այս է, բոլոր բանակին իմաց տաք, որ մեր աղեղնաւորք չի մեղանչեն պատերազմի մէջ այն քաջ ախոյեանին, որ իմ պալատս ոտք կոխեց մարդկային քաջութեամբ մեր բոլոր պատրաստութեան դէմ. թէ որ բարեկամութեան ձեռն տայ մեզ: Եւ թէ որ նա իմ թագաւորական կեանքը ինձ խնայէ և մարդկութեան օրէնքին էլ դէմ իր թշնամին քնի մէջը աւազակաբար սպանելու, չի կամեցաւ, մենք էլ վեհանձնական պարգև կ'համարենք այնպիսի քաջ տղամարդին՝ իր կեանքը շնորհելու»:

Ի՞նչ ծածուկ բան կը լինի աշխարհիս մէջը որ յայտնուի ոչ. Նուարդի երազը արդէն բոլոր Արմաւրայ մէջը կ'ծփար. և հողմը Հայաստանի ամէն եղերքը կ'հնչէր. զօրք ու զօրավարք, ժողովուրդ ու գիւղականք պատերազմի կը գրգռուէին:

Իսկ մենք երբոր կ'սպասէինք որ Արամայ նախարարները աւելը դուրս գալուն հետ՝ մեր առաջարկութեան պայմանը ընդունելու պիտի Շամիրամայ շնորհակալութեան գային, յանկարծ սև խապար հասաւ մեզ, մեր յառաջապահ զօրքերը որը նետ ու աղեղը թողած, ոտի ձին փախած, որը քնէն ելած՝ փախստեայ բանակը թափեցին, ձայն ձգելով թէ Արամայ բանակը յարձակուեց մեր վրայ:

Այլ միջոց չկար պատրաստութեան, մեր զօրքերը խառնուեցին իրար, շփոթը շատացաւ մէջերնիս. հազիւ կարողացանք Հայոց կատաղած զօրքերի յառաջը բռնել, մինչև որ Շամիրամը հնարք գտաւ նրանց խօսք հասկցնելու. մէկ կողմէն Արամայ բանակի զօրագլուխը կանչեց. մէկ էլ կողմէն իր սենեկապետների մէկին Արայի ծերունւոյ դիակը հագցրուց, զոր Արայ նրա խորանի մէջը թողել էր, շուտով հանեց Հայոց զօրաց յառաջը [1], որ հազիւ կարողացաւ հաւատացնել գրգռուած զօրքերին, թէ ինքն էր որ Արամայ կողմէն Շամիրամայ հետ պատերազմը յետ ձգելու խօսք տուած ու եկած է, և հիմա երեք ամիս զինադադարում լինելու պայմանն դրած է հետը. որ նրա հարցմունքներին պատասխան տայ, ու հաշտութիւն կապի Ասորեստանի թագաւորին հետ, ինչպէս որ Արամայ ինքը խօսք է տուել. սրանով շատ դժուարութեամբ ամէնքին էլ համոզեցրուց, որ յետ դարձան. և մեր բանակին այս երեք ամսուան մէջ Նեբրովդայ պատերազ-

[1] Խորէն. գիրք ա. եր. 79:

մին տեղը տալու՝ Արամայ խորհրդարանը վճռեց որ կարողա-
ցանք անվնաս Արմաւրայ դաշտէն մեր բանակը հանել:

Բայց ծերունի երիտասարդը որ Արայն է եղել, և Շա-
միրամայ պատմել է թէ ինչպէս կարողացաւ Ասորեստանի
երկիրը անցնել ու գիշերը իր պալատը մտնել, մէկ էլ որ երբ
Շամիրամ իր մատանիքը կ՚տեսնի Արայի մատին, խօսք կ՚տայ
նրան առնելու, թէ որ կարողանայ Արայ գնալ Նինոսի տան
գաղտնիքն էլ իմանալ. այս ամէն անցքը եղել է Շամիրամայ
խորանի մէջ, երբ որ նա ատեանը ցրուեց, ու առանձնացաւ
Արայի հետ:

Միայն մենք էն տեսանք որ ծերունի երիտասարդը իր
եկած երեկոյին, գիշերուայ մթան հետ ճամբայ ընկաւ Բա-
բելոն դառնալու, որ առաւօտը էն վտանգը մեր բանակին պա-
տահեց:

Բայց Արայ որ իր եղբայրքը հօրը ձգել էին, թէ ի՞նչ-
պէս է ազատուել, ու այնպէս Արմաւիր եկել մտել էր, ինքը
այն առանձին խօսակցութեանը մէջ Շամիրամայ պատմելու
ժամանակը՝ սենեկապետների մէկը այսպէս լսել է:

Արայ որ գնացել բաբելոն, գիշերը Շամիրամայ պալատն
էր մտել իր հօր աչքերի համար դեղ առնելու, և այս իր քա-
ջութեանը նշան Շամիրամայ մատանիքը մատէն հանել էր
նրա քնած ժամանակը, երբ որ Բաբելոնէն յետ կ՚դառնայ ու
եղբայրքը տալով մեր երկրի պահապան վիշապների հարստու-
թիւնները. նրանք իր հետը առած հայաստան կերթայ: Եղ-
բայրքը Արային հօրը կ՚ձգեն խաբէութեամբ. Արայ երեք օր ե-
րեք գիշեր հորի մէջ մնալէն ետքը, Բաբելոնէն վաճառական-
ներ հորի վրա եկած ժամանակին, երբոր ջուր կըհանեն, Ա-
րայ հորէցը ձայն կ՚տայ, մարդիկը կ՚իմանան ու կ՚հանեն նրան.
ծերունւոյ դիմակը որ գաղտնեաց աստուածուհին իրան էր
տուել, հետն էր. հորի միջին կ՚հագնի. և այնպէս ծեր մար-
դի կերպարանքով նրանց հետ կերթայ Արմաւիր կ՚մտնի. այն

ժամանակը մեր պաշտօնը իմանալով, բանի եղելութիւնը
կ՚հասկնայ. վաճառականների ձեռքով Արամայ կ՚ներկայա-
նայ, խօսք կ՚տայ որ Շամիրամայ ինքը կարող է հասկցնել
պատերազմը դադարացնելու, այնպէս էլ արուց. Նա գնաց
Բաբելոն, մենք էլ մեր բանակովը գնացինք Նեբրովդայ պատե-
րազմին տեղը, ուր որ իր անունովը այն մեծածախ քաղաքը շի-
նեց իր ազգապետի մահուանը յիշատակ՝ Արզի ծովին վրա [1].
որ մինչև հիմա էլ Շամիրամակերտ կասուի ձեր մէջը:

Յետոյ թէ Արայ ի՞նչպէս վերադարձաւ ու ի՞նչ լուր բե-
րաւ, կամ թէ Շամիրամայ կին լինելը ի՞նչպէս բանակին
յայտնի եղաւ և ի՞նչ դէպքով սպանուեցաւ Արայ, մենք էլ
ապստամբեցինք ու Շամիրամը սպանեցինք, այս ամէնը հա-
ցէն եաքը կ՚պատմեմ քեզ:

## Զ.

Արայի վերադարձը. Շամիրամայ յայտնուելը. և Արայի դեղ-
ատուածով մահը. և Ենուշաւանայ ազատութիւնը ի հայրենիս:

Գիշերուայ հանգստեան ժամերը կ՚հնչէին արդէն,
երբոր Զրադաշտ պատմութիւնը ընդմիջեց. պալատի մեծ
դահլիճը ջահերով զարդարուած էր. սեղանը ծայրէ ծայր
ճոխացած զանազան համադամներով. ափսէները լիքը կախա-
ղանաւոր բուրաստանի հազուագիւտ պտուղներով. սեղանի
շրջապատը կ՚բռնէին ոսկեգլուխ և վիշապատուտ աթոռները.
սենեկի դուռը բացուածի պէս այս ամէն պատրաստութեանց
համաձեւութիւնը մէկ նոր ուրախութիւն կ՚բերէին Ենուշա-
ւանայ սրտին և հոգւոյն: Զրադաշտի երկար ու անկեղծ

[1] Տե՛ս վանայ խոր. գիրք ա եր. 81:

պատմութենէն ու նրա այս տեսակ ընդունելութենէն իր վրա նրա սիրոյ և բարեկամութեան մեծ համարումը կ'ճանաչէր։ Սեղանի սպասքը կատարուելով, հացի նստան Զրադաշտ ու Անուշաւան. յիսուն ծառայք յառաջին շարուած, սեղանին սպասաւորել սկսան։

Աւելի Զրադաշտի հայրական սիրոյ քաղցրութեամբը ըղմայլած Անուշաւան, քան թէ մեծածախ ընդունելութեան անուշարար գինւով, հացի վերջը իր անկեղծ սրտի շնորհակալութիւնը արուց Թագաւորի երկրորդին, ու դարձան, նըստան վերստին հիւրընկալարանին մէջ. ուր Զրադաշտ նորէն սկսաւ Արայի քաջութեան անցից պատմութիւնը օրինակ զայս։

«Գնաց, ասաց, Արայ. և գիշերուայ լռութեան հետ ընկերանալով, երեսուն աւուր մէջ հասաւ Ասորեստանի սահմանագլուխը. ու մտաւ այն հորիզոնի տակ, ուր որ առաջի անգամ գաղտնեաց աստուածուհին պատահել էր իրան աղբիւրի վրա ծերունու կերպարանքով, ու բոլոր ճանապարհի անցքը իրան պատմել էր. յոյս ունէր թէ միւսանգամ գաղտնեաց աստուածուհին պատրաստ պիտի գտնի իր ընդունելութեանը, բայց սև ապառաժը միայն տեսաւ անտառի առաջին թաւուտ մայրերի տակին բոլբոսած, որի վրա աստուածուհին յառաջին անգամը նստած տեսաւ։

Դեռ նոր իր նուիրական աղօթքը մատուցանելով աստուածուհւոյն, երախտագէտ սրտի սիրոյ սեղանը կուղղէր բաղկատարած ծունկի վրա եկած, ու կ'հառաչէր ի խորոց սրտէ. աստուածուհւոյ ահաւոր ու ալեզարդ դէմքը աչքի յառաջը կ'նկարուէին և նրա վսեմ խորհրդաւորութեան ձայնը կարծես թէ վերստին իր ականջովը կ'լսէր Արայ, իր երևակայութիւնը այնպէս փոխուելուն վրա՝ ինքն իրեն սկսաւ ասել.

— Սպառնացած է իմ վրա աստուածուհին․ վասնորոյ և իր դիցական տեսութիւնը այս անգամ կ'ծածկէ ինձանից․ չեմ գիտեր իրան ունեցած պարտքս կատարելու ո՞ր մէկը ծուլացայ․ անհնարին աղէտք կ'լինի ինձ, եթէ անհաճոյ գտնուեմ այս անգամ յաչս դիցուհւոյն․ անշուշտ Շամիրամայ առաջին ամօթապարտ պիտի մնամ․ և այն ժամանակը վա՜յ իմ հայրենեաց....

Այս մտածմունքի մէջ և ահա անտառի խորքից աստուածուհւոյ ձայնը առաւ․ ուր որ թաւ մայրենների տակին արծաթափայլ աղբիւրը կ'վազէր։

— Միւսանգա՞մ դու այստեղ, կանչեց աստուածուհին, դիւցազն Հայոց․ միւսանգա՞մ դու անմահից տեղերը ոտք կը կոխես, կանչեց յանկարծութից, և լռեց բարբառը։

Մազերը քստմնեցաւ Արայի ի սիրոյ և յերկիւղէ․ և մինչդեռ աստուածուհւոյ ձայնին զմայլելով, չէր գիտել պատասխա՞ն տայ, թէ հարցման սպասի, և ահա վերստին որոտաց բարբառն դիցական։

— Ի՞նչպէս փութահացար վերստին այս անմատչելի տեղերը գալ հասնել․ մի՞ թէ նորանոր փորձանքները կ'առաջնորդեն քեզ իմ ոտքը․ բայց աստուածոց կանխասացութիւնները պիտի լցուեն․ այսուհետև իմ ձայնս կլսես դու աստ, բայց զիս չպիտի տեսնես․ Շամիրամայ ստիպումը միւսանգամ կըդարձնէ քեզ ի բաբելոն․ բայց անհնարին է քեզ լսել ի մարդկանէ թէ ի՞նչ էր Նինոսի տան գաղտնիքը․ բոլորում մարդկային գիտութենէ ծածկուած է այն անցքը [1]։

Սիրտ առաւ Արայ աստուածուհւոյ խօսքերէն և ծունր կրկնելով շնորհապարտ սրտիւ համարձակեցաւ ասել, թէ այն

---

1) Նինոսի անցքը այն տեղից կիմանամք գաղտնի մնացած հաստատութենէն. որ նա կհրամայէ յառաջնոց մատեանները և զրոյցները . . . . այրել։ Խոր. գիրք Ա. գլ. ժ՟։

գաղտնիքը լսելու՝ միայն աստուածուհւոյ ոտքը ինկած է, և ոչ ի բաբելոն կերթայ:

Լսէր ուրեմն, կրկնեց աստուածուհին, և դարձ առաւ վերստին յԱրմաւիր ուր որ քու կենացդ վերջը կնքել են աստուածք. և այսպէս սկսաւ խօսել.

— Նինոս Սորեստանի առաջի աւեղ թագաւորը ունէր իրան թագուհի աշխարհքիս կանանց ամենէն գեղեցիկը՝ վարդ անունով. Շամիրամն այրը որ Նինոսի նախարարաց առաջինն էր, սիրահարուած էր Վարդի վրայ. և այնպէս կարողացել էր թագուհւոյ փոխադարձ սէրը վայելել:

Երկար ժամանակ սրանց սէրը ծածուկ կ'մնայ իրանց մէջը. վերջապէս Նինոս կ'իմանայ և այնինչ մտադիր կ'լենի նախարարը սպանել տալու. Վարդը իր սիրահարի հետ Նինոսէն յառաջ հնարք կ'մտածեն. գիւթական մահակը [1] ձեռք կ'բերեն, որ ինչ բանի դիպչի, մարդու ուզածը կ'դառնայ, մէկ օր Նինոս քնած ժամանակին, թագուհւոյ սիրահարը մահակը նրա վրա դնելով, ագռաւի կերպարանք կ'դարձնեն Նինոս. եօթը տարի խեղճ կենդանին պտտելէն ետքը, կ'դառնայ իր պալատը. Վարդը տեսնելով յանկարծ, կ'խղճահարի Նինոսի վրա. ուստի իրանց մօտը պահելու համար միշտ՝ Նինոսը կ'դարձնեն շան կերպարանք. — Այս բանը ծածուկ պահելով ժողովրդից, իրանք կ'վարեն Նինոսի թագաւորութիւնը. և թագաւորական գահը անարժանութեամբ երկար ժամանակ կ'նստեն:

Բայց աստուածոց երկայնմտութեանն էլ չափ կայ. թէ շուտ թէ անագան մարդոց անիրաւութիւնը աստուածք իրանց արդարութեամբը կ'պատժեն. և ժամանակաւոր անիրաւութեանը մշտնջենաւոր պատժոյ հատուցումն կանեն.

---

[1] Հայաստան աւեղծուածների (հեքեաթի) մէջ այս փայտին թալըլսի անունը կ'տան, զոր մենք գիւթական մահակ կոչեցինք:

Արամազդայ անքուն աչքը կ՚հսկէր երկու սիրահարի տափական գործոց վրայ. երբ տեսաւ որ նոքա չե՛ն դառնալ իրանց գործքէն, վճռեց չարը չարով կործնել:

Արդէն եօթը տարի էլ անցել էր, որ ողորմելի Նինոսը շան կերպարանքով իր պալատին մէջը կ՚պտտէր և ոչ մէկը չէր ողորմել. մէկ օր երբ զբօսանք գնացել էին երկու սիրահարը, շունը խեղճ կերպարանքով արտասուք լիքը աչքով կ՚նայէր հացթուխի աղջկայ երեսը, երբոր նրանք հացէն ետքը նստած էին պալատի մեծ սրահի մէջը առանձին:

Աղջկայ գութը շարժեց շան վրայ. նրա աղէողորմ նայուածքը փղձկեցին աղջկայ սիրտը.

— Մա՛յր իմ, ասաց աղջիկը, ի՞նչ խեղճ դէմքով կ՚նայի մեզ այս շունը:

ՈՀ, դարձոյց մայրը, դուստր իմ, դա մեր Նինոս Թագաւորն է. բայց Վարդը սիրահարուելով դրա զօրավարի վրայ, որ հիմա կ՚տեսնես աթոռը նստած, դրան շուն են դարձրել:

Ինչպէ՛ս, ասաց աղջիկը:

Դիւթական մահակովը, զոր Վարդը միշտ իր ձեռքին կ՚պահի:

Ահա՛ մայր իմ, կրկնեց աղջիկը, այն մահակի տեղը ես գիտեմ, ուր որ այսօր Վարդը պահեց զբօսանքի գնալու ժամանակ. և իսկոյն վերթռաւ, փայտը պահած տեղէցը առաւ ու բերուց մօրը տուաւ. մայրը նոյն րոպէին շանը վրայ դնելով, ասաց, Նինոս Թագաւորը դառնաս ու քու աթոռդ նստիս:

Եւ ահա՛ յանկարծ շունը կերպարանափոխուեցաւ. Նինոս իր Թագաւորական գահը նստեց, ու դիւթական մահակը ձեռք առաւ:

Իրիկուայ արևը մէր մտնելուն հետ՝ Վարդը իր սիրահարի հետ ներս մտաւ. իրանց սովորական զուարճութեամբը

գետևս սրահի մէջ խօսակցութեան կ՚յապաղէին, երբ որ Նինոս իր փառահեղ ալեզարդութեամբը մահակը ձեռքին նրանց յանդիման եկաւ. իսկոյն մահակով զօրավարը հարկանելով, մի մեծ ապառաժ քար դարձրուց նրան, յետոյ Վարդին դառնալով, տուաւ մահակովն ու ասաց, և դու մի սօսի ծառ դառնաս պարտիզի միջին. իսկոյն երկու սիրահարն էլ Նինոսի ուզած գոյափոխութիւնը ստացան. յետոյ Նինոս առանց հեռատեսութեան սրտի բարկութենէ մահակը Եփրատի ալիքներին տուաւ:

Այն ժամանակը Շամիրամ որ զօրավարի կինն էր, Նինոսը իրան կին առաւ, որ շատ պատերազմների մէջ ձեռնտու եղաւ նրան. բայց Շամիրամ, իր առումից վրէժը առնելու համար՝ Նինոսը սպանեց [1]) ու իր կնութիւնը ծածկելով աշխարհքի աչքից, մինչև հիմա կ՚թագաւորէ իր դիւթական հնարքովը. — Ահա այս ամէնքն են Նինոսի տան գաղտնիքը, որ քեզ կ՚յայտնեմ. քու ձեռքովը աստուածք վճռել են որ աշխարհք իմանայ, ի՞նչ ժամանակ իր կին լինելը կ՚յայտնուի, այն ժամանակն էլ նրա սպանումը և քու կենացդ վերջը կնքել են աստուածք:»

Այս ամէնը աստուածուհւոյ բարբառը խօսեցաւ ու լռեց. Արայ մինչդեռ երկիւղի և յուսոյ ակնկալութեան մէջ ապշած՝ դէպ ի երկինք կ՚նայէր որ միւսանգամ դիւցական բարբառը լսի, կամ ուրիշ խրատ ընդունի իր կեանքը երկարելու, վերստին կրկնեց բարբառը:

— Գնա և քաջութեամբ պատասխան տուր Շամիրամայ. մարդոց ճակատագիրը ի՛նչ որ աստուածք գրել են՝ միայն քու այսքան դիւցազնական գործոց փոխարէն՝ հայրենացդ մէջ աստուածք քեզ դիցական պատիւ պատրաստել են, այն միմիայն է քեզ յաւերժական պարծանք:

---

1) Խոր. գիրք ա. գլ. ժե:

Դարձաւ Արայ Հայաստան. իր երեք տարեդարձը կատա-րել էր արևը, երբոր հասաւ մեր բանակը. մեծ ուրախու-թեամբ ընդունեց նրան Շամիրամ իր նոր շինած քաղաքին մէջ. պատերազմի պայմանն էլ լռանալու օրն էր նրա գալը. չգիտէինք ի՞նչ ելք պիտի ունենայ մեր բանակը տարիներով օտար երկրի մէջ մնալով: Արամայ կողմէն պատերազմի եր-կիւղը տարապայման էր. որովհետև այս միջոցին էլ Աստ-ուածք նրա մահկանացու կենաց ասպարէզը կարճեցին [1]. կ'լսէինք որ Արամայ բոլոր զօրքը մեծ խռովութեան մէջ են ըն-կել առանց առաջնորդի և առանց կառավարի մնալով. որով և որոշել են որ վճռական պատերազմը տան մեր դէմ. իսկ մեր կողմից յուսահատութիւն ու տրտունջը կ'բարձրանար բանակի մէջ:

Այս դժուար պարագայի մէջ Շամիրամ օրերով առանձ-նացած կը կենար Արայի հետ իր պալատին մէջ. դեռ ևս ո՛չ ինչ բան չէր յայտնուել. այս ամէն ձայներին էլ երբէք ունկն-դիր չէր լինել. բայց մեր տէրութիւնը թշնամու զօհ չանե-լու համար, Ասորեստանի և Նինուէի կողմնապետութիւնը այս միջոցիս մեզ յանձնելով, բանակի քառորդ բաժինը յետ դարձրուց մեզ ի բաբելոն:

Իսկ Շամիրամ երբոր Արայի բերնէն լսել էր Նինոսի տան գաղտնիքը և իր թշուառ ամուսնոյ անցեալ պատմութիւնը, և այն՝ թէ ի՞նչ աղէտալի դէպքով ինքը Ասորեստանի գահին վրայ թագաւորել է, այս ամէնը իմանալով որ աշխարհք հրա-պարակուած է, իր խոստումը հաստատ պահելով որ տուած էր Արայի, մանաւանդ որ նրա գեղեցկութեանը վրայ վաղուց էր սիրահարուած, ու գրաւականն էլ Արայի ձեռքն էր արդէն, անձնատուր եղաւ Արայի և հրապարակաւ յայտնեց զինքը

---

[1]) Արամայ մահը այս տեղ կդնենք, որ մեր գրուածքը աւելի չի ընդար-ձակուի. մէկ էլ որ պատմութեան կարգէն տարապայման դուրս չ'ի գանք։

բանակին. որ այնքան տարի կանացի խորամանկութեամբ՝ իբրև քաջ հսկայ Նինոսի անունովը թագաւորել էր. սրա վրա խոստանալով հաշտութիւն կապել Արամայ զինուորութեան հետ, կ'ստիպէր Արայի որ զինքը կին առնու, և թագաւորէ բոլոր Ասորեստանի վրա որոց կ'տիրէր Նինոս [1], Հայաստանն էլ իր ժառանգների ձեռքովը կառավարէ:

Բայց Արայ որ մեծ գործ ունէր կատարելու յԱրմաւիր և իր եղբարց դատաստանը իր ձեռքով միտքը դրած էր տեսնել Արամայ խորհրդարանին մէջ, ու դեռ յառաջ իր հայրենի ժառանգութիւնը օրէնքով առնէր, ողջախոհութեան օրէնքը և Նուարդայ սէրը երբէք թոյլ չէին տալ մեղկանալ իր քաջ տղամարդութիւնը, այսքան դէպքերի մէջ փորձուելէն ետքը Շամիրամայ կամքին խոնարհել, այլ նրա թախանձը յանձն էր առել կատարելու ինքը Արամայ գահին վրա հաստատուելէն ետքը:

Բայց ի՞նչ սանձ կայ որ կանացի ցանկութեան կրից յառաջն առնի, ո՛չ Հայոց զօրաց յարձակումը, և ո՛չ մեր մնացած բանակի ապստամբութիւնը չկարացին չափ դնել նրա մոլեկան սիրոյն. պատերազմի ժամանակը հանելէն ետքը երբոր Շամիրամ ոչինչ որոշում չէ՛ անել կամ հաշտութեան կամ պատերազմի, այլ Արային կ'ստիպէ որ զինքը առնու և ինչպէս որ նրա սիրոյն բոլոր իր որդիքը կոտորեց, իր իշխանութիւնն էլ կխոստանայ նրան թողալ, թէ որ Արայ իր կամքը կատարելով, Ասորեստանի թագն էլ առնու, այն ժամանակը կ'խոստանայ Նինուաս էլ սպանելու, որ իր թագաւորութեանը ժառանգ էր թողել:

Այս նեղ րոպէին, մինչդեռ Արայ հաստատ կենալով իր ուխտի վրա, կ'պնդէր թէ քանի որ ինքը, չէ՛ յայտնուել իր

---

1) Խոր. Ա. գիրք. գլ. ժե:

ազգին, ուր որ քաջերի ձեռքը մեռած կ՚համարուէր, ու եղ-բարց դատաստանը չի տեսել, անհնարին է իրան Շամիրամայ կամքը կատարել․ այս նեղ բոպէին եւ մինչդեռ պատերազմի երկիւղը ժամէ ժամ կ՚սաստկանար, և Արամայ զօրաց յար-ձակման լուրը կ՚հասնի մեր բանակի մէջ, բոլոր այս անց-քը զինուորականների ձեռքով կ՚հասկացուի բովանդակ բա-նակի մէջ:

Այս հնարքը միայն կ՚գտնեն Շամիրամայ նախարարքը որ նաժիշտների ձեռքով Արայ կ՚սպանեն գիշերը, հաւա-տացնելով Շամիրամայ, թէ փախստական գնաց յԱրմա-ւիր․ առաւօտը իսկոյն մեր բանակը կդառնայ Արմաւրայ դաշտը, որ օր յառաջ գետի անցքը բռնեն Արայի զօրաց յա-ռաջը․ երբոր մեր բանակը Շամիրամայ առաջնորդութեամբ իր յառաջուայ տեղը կ՚բռնի, լուր կուտայ պատերազմի ոչ թէ Արային սպանելու համար, որ կը կարծէր թէ կ՚առաջնորդէ հայոց զօրքերին, այլ նրան բռնելու և իր կամքը կատարելու համար:

Պատերազմը սկսաւ․ յառաջին յարձակմանը մեր զօրքերը յաղթող կ՚հանդիսանան․ Շամիրամ Արայի համար պատու-էր կ՚տայ որ ողջ բռնեն․ իսկ թշնամին որ միւս կողմից իր դշ-խոյին սիրոյն պատերազմի մէջ կ՚յաղթուէին ու յետ դառնալ չեն ուզել, այլ կրկին օգնական առնելով, միւսանգամ պա-տերազմը գրգռելու ժամանակը, երբոր Արայի մահուանը համար քինախնդիր կ՚լինեին և փոքր կմնայ որ մեր բանակը ջարդեն, մեր քաջ պատանիները Արայի դիակը Շամիրամայ յառաջը կ՚հանեն թէ յառաջին յարձակմանը մէջ յանդէտս սպանել էին, ու հիմա մեռածների մէջը գտան:

Այս ժամանակն էր ահա, որ Շամիրամ ակնունելով թէ իր դիւթական արհեստովը կենդանութիւն կտայ Արայի, իր ցանկութիւնը կատարելու համար, իր վրանի մէջը քանի մի օր պահել կտայ դիակը, բայց երբոր խայտառ կ՚նեխի, պատե-

բաղմի տեղը մի սարի [1]) մէջ կ'թաղի, ուր որ Արայի զօրաց բանակը նստած էր յառաջ. դեսպան կղրկէ Արամայ բանակը թէ «Հրամայեցի մեր սպասաւորներին Արայի վէրքերը լիզելու, որ կենդանութիւն տան նրան» իսկ իր սիրահարներից մինն էլ Արայի անունովը զարդարելով, սուտ համբաւ կ'հանի թէ Աստուածք Արայի կենդանութիւն տուին. Այս ամէնը հաւատացնելու համար Արայի գերեզմանի վրայ էլ աստուածոց անունովը պատկեր կանգնելով, զոհ կմատուցանէ նրանց, ուր որ հիմա դուք էլ Արայի անունը պաշտօն կտանէք, որով հաղիւ պատերազմը դադարացնելով, հաշտութիւն կը կապէ:

Մեր բանակի շատ գունդերը այս ամէն բաների վրա Շ՚ամիրամէն ապստամբելով, հասել էին արդէն բաբելոն. ուր բոլոր Ասորեստան տարածել էին նրա գործերը, նրա մոլութիւնները Արայի վրա. նրա խօսք տալը Ասորեստանի ժառանգը սպանելու, ու տէրութիւնը Հայկազանց ցեղի տակը դնելու:

Այս եղաւ իմ սխալանքը [2]), որ ինձ վրա մեծ յանցանք դրուց երբոր ես էլ այս ամէնը լսելով, մանաւանդ որ այնքան տարի խաբուելով, մէկ կնոջ հրամանի տակ մնացել էինք, արհամարհեցի նրա հրովարտակը, որով ինձ կ'հրամայէր բոլոր փախստական զօրքերը իրէ անցնել. ընդհակառակն բոլորը մեր հետ միացնելով, երբոր նա յոյս ունէր թէ իր հրամանը ճըշդիւ կը կատարենք, յանկարծ նրա վրա արշաւանքի ելանք դէպ ի Հայաստան. գիտելով որ մեր զօրաց մնացորդն էլ որ Շ՚ա-

---

[1]) Լեառն Արայի. ուր մինչև հիմա էլ Հայաստանի ժողովուրդը մեծ բաղմութեամբ ուխտի կերթան Համբարձման օրը, համարելով թէ այն տեղ կայ գերեզման Վառվառէ անունով մէկ կուսի: Բայց սրա հաւատքը ազգային պատմութեան մէջ չլինելով, երևի թէ այս սովորութիւնը կռապաշտութենէ անցած է քրիստոնէութեան. և Արայի գերեզմանին ժողովուրդը ուխտի կերթան կուսի անունով:

[2]) Խոր. ա. գիրք. գլ. ժէ:

միրամայ հետն էր՝ հայրենեաց սիրոյն մեզ հետ կ'միանայ. և ապօրինաւոր Թագուհւոյ իշխանութիւնը կ'մերժէ, որ խաբէութեամբ մինչև այն ժամանակը Նինոսի զօրավարի անունովը Թագաւորեց Ասորեստանի վրայ, և Նինոսի որդւոց անկարող արիւնը Թափեց իբրև օրինաւոր Թագաւոր իր աԹոռոյն Նինուասը ժառանգ պահելու համար:

Մեր յարձակումը լսելով Շամիրամ, Արայի զօրքերովը իր բանակը կը շատացնէ, որոց զօրապետ կարգել էր քու հայրդ Արայի որդին և ձեր աշխարհքի վերակացութիւնը նրան էր յանձնել. յառաջ եկաւ մեզ մինչև Աղի ծովը. ուր իր ամրանոցն էր շինել. երկու կողմից զօրքերը մեծ շփոթութեամբ իրար խառնուեցին. Շամիրամայ բռնած Թևը կ'յաղթուէր, որի դէմ Նինուաս կպատերազմէր. այնպէս նեղը կը ձգէն, որ Շամիրամայ տակի ձին ընկնելով, ինքը ոտքով կ'փախչի դէպ ի ծովը [1]. սաստիկ Թալկացած ու ծարաւած ժամանակը երբոր ջրի վրայ կընկնի, Նինուաս իր որդին վրայ հասնելով սուրը ձեռքին, իր հօր տան վրէժը առնելու համար, մօր վիզը կը կտրի ու ծովը կ'ձգէ. յուռութը Թևիցը կառնու Նինուաս, և այն ամէն Նինոսի տան գաղտնիքը մէջը գրած կը գտնի.— Այս տեղից այն առասպելը հանեցին մեր աշխարհքի բանաստեղծք. «Ուլունք Շամիրամայ ի ծով.» որով Շամիրամ կարծես Թէ Նիոբէէն յառաջ քար դարձաւ. որ իր այրն էր [2]:

Իսկ մեր յառաջի Թևին մէջն էլ ընկաւ քու հայրդ Արայ Արայեան. որ յետոյ ձեր տունն էլ գերեցինք ի բաբելոն, ինչպէս որ գիտես:

Այս ամէն անցքերը յայտնի եղան մեզ Արայի քաջուԹեան գործքերովը. և որովհետև նա գրեԹէ պատճառ եղաւ

---

1) Խոր. Ա. գիրք. գլ. 11:

2) Այս անունը յարմարութեամբ կոանք Շամիրամայ մարդուն:

Ասորեստանի թագաւորութեան նորոգուելուն և ժողովուրդը բռնաւորական լուծէ ազատուելուն, աւելի սորա համար Նինուասայ պարտականութիւնն է իր դրացի ու հաւատարիմ ազգի միապետին երախտագէտ լինել, ու նրա հաւատարմութիւնը պսակել, որ իրանց քաջ զօրապետքը մեզի ապաւինելէն ետքը, այսքան տարի հաւատարիմ դաշնակցութեան արին մեզ հետ. և իրանց աշխարհքի հարկը առանց մեծամտութեան կ'հատուցանէին:

Թող զայս, մեր սահմանակից ազգերը որքան զօրեղ լինին և հաստատուն իշխանութիւն ունենան, մեզ օգտակար են. Մեր ապստամբութիւնը ապօրինաւոր ու ծպտեալ թագուհւոյ դէմ էր. որ մէկ կողմանէ բռնութեամբ, միւս կողմանէ իր կանացի մոլութիւններովը թագաւորեց Ասորւոց գահի վրայ, ու նսեմացրուց նրա փառքն ու պարծանքը. իսկ հիմա աստուածոց օգնութիւնը մեզ հետ միաւորուեց. և այսպէս չարաչար վրէժ առինք Շամիրամէն Նինոսի տան արեան փոխարէնը:

Մ'ճանաչենք մեր հաւատարիմ դաշնակիցը. որ մինչև իրանց արեան վերջին կաթիլքը հաւատարմութիւն կպահեն մեր տէրութեան հետ. և իրանց զօրք ու զօրութիւնը կ'զոհեն մեր ազգի անունը պահելու և իրանց հայրենիքը փառաւորելու:

Ուստի և ձեզ, Անուշաւան, որ այսօր այսպիսի ազգին առաջնորդ ու հայրենի իշխանութեան ժառանգ էք մնացել, մեր երախտագիտութեան շնորհը կ'ընդարձակենք ձեզ, և ձեր ազգի հաւատարմութիւնը կվարձատրենք անշուշտ:

Օրինակ լինի ձեզ Շամիրամայ մոլեկան գործոց գէշ հետևանքը թէ ի՞նչպէս Նինոսի բոլոր տունը կոտորելէն ետքը, վերջապէս իր անձին էլ կորուստը այս իր մոլեկան ցանկութեամբը գտաւ:

Ակ՛յ լինի ձեզ այս, որ մարդկային մոլութեանց վրայ

առաքինի մարդիկ էլ աչք չեն փակել, այլ մէկ րոպէ վրէժխնդիր կ'լինին և առաքինութիւնը վերջապէս մոլութեան վրա յաղթող կ'հանդիսանայ:

Օրինակ լինի ձեզ և Արայի ողջախոհութիւնը. որով աշխարհքիս թագաւորները իր հետ սիրով կապուելէն ետքը, աստուածք անգամ ամէն փորձանքի ու ամէն դէպքերի մէջ նրան առաջնորդ եղան, ու նրա արդարութիւնը աշխարհքի յայտնի արին:

Այն տէրութիւնը որ արդարութեան ճանապարհովը իր կառավարութիւնը կ'ուզէ, աշխարհքիս մոլութիւնները չեն կարող նրա առաքինական ընթացքը հեղձուցանել. իսկ այն մարդը որ կուզի մոլութեամբ առաքինութիւն վաստակել, առաքինութիւնները նրանից հեռու կ'փախչեն. և ինքը այն մոլութիւններովը մէկ տեղ կը կորչի. ժողովուրդն էլ առաքինի թագաւորի հետ իր հաւատարմութեան սիրովը կը կապուի:

Մենք միշտ այսպէս տեսած ենք ձեր հաւատարիմ ժողովուրդը, որ իր հաւատարմութեան սէրը Արշակունի գահին հետ՝ նրա թագաւորի առաքինութեամբը կապած է և ոչ մոլեկան ցանկութեանց հետ միացած. ուստի ձեզանից աւելի հաւատարիմը չունի Նինուաս, որ քու հայրենի ժողովուրդը կառավարի. այս կասեմ. և իմ պարտքս լինի որ առաւօտը և եթ մեր ծաղկահասակ և առաքինի թագաւորի հրամանաւ քու երկրի հարկահանութեան վրա քեզ իշխան կարգել տամ. և Հայաստանը քու միապետութեանը յանձնեմ, որ քու նախնեաց իրաւացի ժառանգութիւնն է, և մեր թագաւորութեանը հաւատարիմ դաշնակից:

Այս ամէնը Զրադաշտ խօսեցաւ Անուշաւանայ հետ. գիշերը որ ընդմիջել էր արդէն, գնացին երկուքն էլ իրանց ննջարանը ի հանգիստ:

Առաւօտը Զրադաշտ իր սովորական կարգովը ներկայացաւ Նինուասայ յարքունիս. Նախարարաց ատեանի մէջ Ա-

սրբասանի գահին վրա ունեցած հայկազանց հաւատարմութիւնը Արամայ օրէն մինչև Անուշաւան ու նրանց ժողովրդեան սրտի անկեղծութիւնը, մի առ մի յառաջ բերելով, այս ամէն իրաւունքս հաստատել տուաւ արքունի հրամանաւ. Հայոց աշխարհքի խնամակալութիւնը Անուշաւանայ յանձնուեցաւ. որով նա ազատուելով իր գերութեան վիճակէն, այնքան տարի դեգերելէն ետքը, Թագաւորական պատուով վերադարձաւ Հայաստան, հաւատալով որ վերջապէս Հայոց հաւատարմութիւնը առանց պսակուելու չի մնալ Թագաւորաց և աստուածոց յառաջը:

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

ՎԵՐՋԱՆ։

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

Գիրք գին — 50 K,
Կազմ գին — 20 K.

2013
14008